

# ԱՔՐԻՄԱԿՆ ՀԱՆՏԻՄ

Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական


ԻԳ. ՏԱՐԻ — ԹԻԻ 19

II

7 ՄԱՅԻՍ 1905

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գեղեցիկ բնութեան սէջ	ՅԱԿՈՐՈՍ ձէձի շեան
Ընթացիկ ներթեր. — «Խաթեր» համար	ՀԱՅԿ ԱԳՈՆՑ
Տերեհներու ՏՕՆԸ (Քերթում)	ՅՈՎՀ. Ս. ԱԼԵԿՍԱՆԵԱՆ
Կենդանական աշխարհի շերտեր	ՀՐԱՆՏ ԼԱԶԱՐԵԱՆ
ԲԱՅ ՆԱՄԱԿ՝ ԱՌ ՎԵՐ. Մ. ՓԱՓԱՋԵԱՆ	ԱՐՍՄ ԵՐԷՅԵԱՆ
Մարզոտներ ամսո՞ւմ թարմանակալ ձեւարան	ՄԵՀՐԱՆ
ՈՒՌԵՆԻՆ	ԷԼԻՉ
Երեւն ու Գեթսեմանին	ՄՈՎՍԷՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՀՈՉԱԿԱՒՈՐ ԳՐԱԳԻՏՆԵՐ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ	
ԻՐԵՆՑ ԳՈՐԾԻՆ ՄԷՉ	ԱՐԱՄ ԹՈՐՈՍԵԱՆ
Երգիչ ԽՐԱԿԸ	ՍԵԴՐԱԿ ԶՈՒԼՈՒՄԵԱՆ
ՀԱՅ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ԹԱԻՉՈՒԹԱԿԱՀԱՐ ՏԻՐԱՆ	
ՊԷՅ ԱԼԵԿՍԱՆԵԱՆ ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԻՔԻՆ ՄԷՉ	
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՉ	



Հատր 40 փարա

Գիւրուքիւ լմը ընծայելու համարմեր բաժանորդներուն՝ իրենց վր  
նարումներուն համար, եւ ամէն անոնց՝ որոնք կ'ուզեն բաժա-  
նորդագրուիլ թերթիս՝ ստորեւ կը հրատարակենք անունները մե գաւա-  
ռական գործակալներուն՝ որոնց կրնան դիմել իրենց հաւաններուն վր-  
նարման կամ բաժանորդագրուելու համար:

Աճափա. — Լաշկազն կֆ. Խանդավազ

Ատարազար. — Ստեփան կֆ. Սափրիչեան

Ատանա. — Խաչատուր կֆ. Միկասեան

Երզնկա. — Յարութիւն կֆ. Տոնարսեան

Իզմիր. — Կարապետ կֆ. Մաշեանեան

Խարթերգ

Մաճուրէթ. Իւլ Ազիզ

Կիւրիս. — Վեր. Գեորգ Տեմիրճեան

Մալաթիա. — Տ. Գրիգոր Գահ. Թաշճեան

Մարզուան. — Գեորգ կֆ. Կիւլեան

Նիկոսիոյի. — Վեր. Փառնակ Իսկեսեան

Ուրֆա. — Սողոմոն կֆ. Գնաճեան

Պարտիզակ. — Լազարոս կֆ. Գանչեան

Պրուսա. — Մարթէն կֆ. Նիկողոսեան եւ Վեր. Եղիա Շամիկեան

Պէյրութ. — Մկրտիչ կֆ. Պողոսեան

Պիթլիս. — Խաչիկ կֆ. Վարդանեան

Ռօտտսթօ. — Միհրան կֆ. Գուրուֆկապեան

Սամսոն. — Պողոս կֆ. Սիմոնեան

Սըվազ. — Մանուկ կֆ. Տիպիեան

Վան. — Խաչիկ կֆ. Լեւոնեան

Տիարպէքիւր. — Յովհաննէս կֆ. Միքիկեան



# Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական

ԻԳ. ՏԱՐԻ — ԹԻԻ 19

||

7 ՄԱՅԻՍ 1905

## ՌԱԺՍՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԲԻԻՐԱԿՆ Շաբաթաբերթի Տարեկան բաժնեգինն է Պոլսոյ եւ Գաւառներու համար 50 դր., Արսասահմանի հասար՝ 5 տուպլի. կամ 12 ժրանց կամ 2 1/2 տոլար, քրթասարուքեան ծախքը մեր վրայ:— 2. Ձեռնէ կը ծախուի հասք 40 փարայի:— 3. « ԲԻԻՐԱԿՆ » ի վերաբերեալ բաժանորդագին, նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Կ. Պոլիս, Պայալ Հաուսի միջոցաւ՝ Ռուպերդ Գօլէն, Բրօժ. Յակոբոս Հ. Ճէնիգեանի. — 4. Անվանար նամակ կամ գրութիւն չընդունուիր. — 5. Տասը օրինակի բաժանորդ գտնողին մէկ օրինակ նուէր կը տրուի :

## ԳԵՂԵՑԻԿԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մայիսը գեղեցկութեանց ամիսն է. առեւ իբր մեծագոյն վարպետը՝ իր ոսկեղէն ճաճանչներով կը նկարէ գեղեցիկը ամէն տեղ, ու մենք գիտակից անոր վարդէ մատերուն ճարտարութեան, մեր շուրջը կը փնտոնենք տեսելու թէ ինչե՞ր կ'արտադրէ ան, եւ թէ գեռ ինչեր պիտի արտադրէ: Ինչպէս մեծ ատենարանի մը ունկնդրած ատեննիս՝ հետեւելով անոր կորովին հիասքանչ հոսանքին, անյագ կը խմենք այն մարգարիտ գեղեցկութեան կաթիլները որոնք իր թափթփին անոր շրթունքէն, ու միշտ կը սպասենք աւելի նորին, աւելի գեղեցիկին, աւելի՛ վսեմին. այսպէս երբ ան գեղեցկութեան մեծ վարպետը՝ արեւը, անպամ մը կը սկսի խօսիլ բնութեան մէջ, ոչ թէ միայն կը հիանանք անոր թափած գեղեցկութեանց վրայ, այլ միշտ աւելին կը

սպասենք, աւելին կ'որոնենք, ու պէտք է որ որոնենք, քանզի ճշմարիտ է որ իրօք շատ քիչ բան կը հասկնանք մեր շուրջը գտնուած գեղեցկութենէն, շատ քիչ թափանցած ենք անոր խորութեան: Այսպէս է գրեթէ ամէն կարգի ճշմարիտ գեղեցկութեան մասին: Առէք Հոմերի, Միլտոնի, Վիրգիլիոսի կամ Շէյքսպիրի նման մեծ բանաստեղծի մը գործը, ու պիտի զգաք շուտով որ թէպէտ հարեւանցի նայուածքով մըն ալ բաւական գեղեցկութիւն կը տեսնէ մարդ անոնց էջերուն վրայ հոս հոն սըփռուած, բայց աւելի ուշադրութեամբ ու աւելի խորաթանց նայուածքով մը նկատելով հեղինակին ամէն մէկ տողը՝ նոր նոր ու թաքուն գեղեցկութիւններ երեւան կուգան. հետզհետէ, մտածումի, իմաստի, ոճի ու լեզուի ոսկի երակներ կը գտնուին խո-

րունկը՝ զոր ուսումնասիրող ու ուշադիր միտք մը աստիճանաբար կարող է երեւան հանել, ասանկով ընթերցողին միտքն ալ տակաւ կ'արթննայ, կը լայննայ ու կը խորունկնայ իր մէջ ընդունելով բոլոր ինչ որ գեղեցիկ էր հեղինակին մտքին մէջ. նոյնը ճշմարիտ է նաեւ Վեժ վարպետներու նկարչական կամ քանդակագործական արտադրութեանց մասին. դիտած էք երբեք Այվագովսքիի՝ մեծ հայ նկարիչին ծովային նկարները, որոնց մէջ մասնաւորապէս գերազանց կը գրտնուէր մեծ հանճարը: Առաջին նայուածքով մըն ալ մարդ բաւական բան կը տեսնէ անոնց մէջ, գոչելու համար. «ո՛հ, ինչ վսեմ է»: Բայց վարժ ու կիրթ աչքեր իրենց ուշադիր ու խորաթափանց նայուածքներով հոն անոնց մէջ կը գտնեն վսեմութեան ու գեղեցկութեան այնպիսի հետքեր զորս անվարժ կամ անուշադիր աչքեր պիտի չկրնային նշմարել:

Փիտիասի մը քանդակած Ալամազդի հոյակապ մէկ արձանը՝ որուն համար կ'ըսուէր թէ դժբաղդ էր այն մարդը որ կը մեռնէր առանց զայն տեսնելու, անշուշտ մէկ նայուածքով ալ հիւստում կը պատճառէր: Արձան մը որ շինուած էր համակ ոսկիէ ու փղոսկրէ, այնչափ մեծ ու շքեղ՝ որ տաճարին մէջ բազմած քառասուն ոտք բարձրութիւն ունէր, եւ եթէ երբեք կարող ըլլար ելնել կայնելու՝ իր հսկայ, վիթխարի հասակը այնպիսի լիտի ըլլար՝ որ տաճարին ձեղունը իր հետ վեր պիտի հանէր: Հին պատմիչները կը պատմեն թէ երբ տարին անգամ մը՝ զայն սքօղող վարագոյրը վեր առնուէր՝ երաժշտական ձայներով, ու արձանը իր բոլոր վսեմութեամբ ներկայանար, զայն տեսնելու համար տաճարին մէջ իրանուող բազմութեան, ժողովուրդին խանդավառութիւնը այն աստիճանի կը հասնէր որ մարդիկ ու կիներ կը յափշտակուէին, կը դիւթուէին ու ոմանք մինչեւ անգամ կը նուաղէին: Բայց ակներեւ է թէ այդչափ

մեծ արուեստագէտի մը գլուխ գործոցը որքան ալ հիանալի երեւար մինչեւ իսկ ումիկ ու թերակիրթ աչքերու, կիրթ, ուշադիր եւ պրպտող աչքեր՝ հոն անոր վրայ պիտի տեսնէին խորունկ, թաքուն գեղեցկութիւններ որոնք առաջին, հարեւանցի նայուածքի մը համար ծածկուած էին: Այսպէս է նաեւ մեծ յայտնութեան, Ս. Գրքին համար: Անվարժ ու անյարմար աչքեր շատ քիչ բան կամ ոչինչ կը տեսնեն հոն զմայլելու, հրահանգուելու և օգտուելու համար. բայց հակառակ ատոնց, հոն գանձեր, գեղեցկութիւններ եւ դրոզեցուցիչ ճշմարտութիւններ պահուած են, եւ մէկու մը զանոնք չտեսնելը հակառակը շնաստատեր բնաւ:

Աւ բնութեան գեղեցկութիւններն ալ նոյն տեսակէն են: Պէտք է չգոհանալ հարեւանցի նայուածքով մը, պէտք է ուսումնասիրել ու պրպտել աւելի խորերը պահուած գեղեցկութիւնները երեւան հանելու, անոնցմէ դասեր առնելու եւ օգտուելու համար: Մեր մեծ վարդապետը մեծ հեղինակութեամբ մը մեզի պատուիրեց որ նայինք դաշտի շուշանին: Ան որ ամէնէն խորունկ ու իմաստասէր միտքը ունէր, անշուշտ մեզի պիտի չպատուիրէր միայն հարեւանցի ակնարկով մը գոհ ըլլալ՝ այլ անանկ խորունկ նայիլ, յառիլ անոր վրայ, մինչեւ որ կարելի ըլլայ մեզի լսել այն մեղմիկ բայց հզօր ձայնը որ կուգայ անկէ, սորվեցնելու մեզի կեանքին մեծագոյն դասերը եւ մեծ Արարիչին Հայրախնամ ու գորովալից բնութիւնը: Նայեցէ՛ք ու մտածեցէ՛ք ըսել ուզեց Ան: Եզերն ալ կը նային, կը նային իրենց ապուշ, անիմաստ նայուածքով: Ռափայէլ մըն ալ կը նայի անոնց մեծ արուեստագէտի մը խորունկ եւ իմաստուն նայուածքով: Եզին ու Ռափայէլին աչքերը Փիգիքապէս գրեթէ միւսնոյնն են, բայց ի՞նչ անհուն տարբերութիւն՝ երկու նայող աչքերուն մէջ. մէկը որ աստիճան վարերը կը

գեղերի, միւսը որչափ բարձրերը կը սա-  
 առնի: Մէկը կը նայի առանց մտածումի,  
 առանց յուզումի, առանց երեւակայութեան:  
 Շուշանին բոլոր կաթնաթոյր գեղեցկութիւնը  
 եզին ուղեղին մէջ ոչինչ կ'արթնցնէ, մինչ  
 միւսին ուղեղը կը փոթորկի ձիւնափայլ, ա-  
 նարատ գեղեցկութենէն որ կը հոսի լոկ  
 անկէ: Եւ հիմայ մտիկ ընենք Գրիստոսի հը-  
 րամանին, միտքերնուս մէջ ունենալով թէ  
 նայի ի'նչ կը նշանակէ մարդուն համար .  
 թէ աչքը միայն գեղեցիկ առարկային վրայ  
 դնել չնշանակեր ան, այլ կը նշանակէ հո-  
 գիին սեւեռումը: «Հայեցարու՛ք ի շուշանն  
 վայրենի, որպէս անէ, ոչ ջանայ եւ ոչ նիւ-  
 թէ: Ասեմ ձեզ, զի եւ ոչ Սողոմոնը յամե-  
 նայն ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի ի  
 նոցանէ, իսկ եթէ զիտան ի վայրի որ այ-  
 սոր է եւ վաղիւ ի հնոց արկանի, Աստուած  
 այնպէս զգեցուցանէ, որչափ եւս առաւել  
 զձեզ, թերահատաք»:

Ս. գրական մատենագիրքը գրեթէ ա-  
 մէնքն ալ կը նկատեն շուշանը իբր թա-  
 զուհին բոլոր ծաղիկներուն: Մեր արդի ժա-  
 մանակներուն մէջ, կրնայ ըսուիլ թէ վար-  
 զը գրաւած է անոր աթոռը: Բայց վարդը  
 ի սկզբան այն չէր ի'նչ որ է այժմ: Ան նա-  
 խապէս միայն ինք թերթիկներ ունէր:  
 Մարդիկ մշակեցին, զարգացուցին զայն,  
 այնչափ հոգացին խնամեցին, այնչափ յա-  
 ւեցին աչքերնին, անոր վրայ որ ան չիկնե-  
 ցաւ, կարմրեցաւ եւ հասաւ իր արդի վառ-  
 վառն ու ճոխ գեղեցկութեան: Աստուածա-  
 շունչին մէջ շուշանն է առաջինը բոլոր ծա-  
 ղիկներուն. անկէ ետքը կուգան կասիա, զո-  
 վա (չուգա օթու) խունկ, զմուռս, նարդոս,  
 քափուր (քեաֆիրի) եւ վարդ: Տասնըչորս  
 անգամ յիշուած է շուշանը Ս. Գիրքին մէջ,  
 վարդը՝ միայն երկու անգամ: Վարդը հիմա  
 ունի ընդարձակագոյն շրջան մը, բայց շու-  
 շանն էր որ կը տիրէր Եսթերի, Սողոմոնի  
 եւ Գրիստոսի ժամանակները: Աշխարհիս  
 մեծագոյն քարոզին, լեռանը վրայի քարո-  
 ղին մէջ մէկ ծաղիկ մը կայ միայն, եւ ան

ալ շուշանն է: Կը հասկցուի սակայն, թէ  
 ան ներկայացուցիչը նկատուած է բոլոր  
 բուսական գեղեցկութեանց, բոլոր ծա-  
 ղիկներուն, եւ այդ առումով, Գրիստոս  
 զմեզ կը հրաւիրէ որ բնութեան բուսական  
 գեղեցկութիւնները խորապէս ուսումնասի-  
 րենք. «Հայեցարուք ի շուշանն վայրենի»:  
 Չարմանալի չէ՞ որ այս կերպով յատկապէս  
 կը հրաւիրուինք, գրեթէ բոլոր ուրիշ գի-  
 տութեան ճիւղերէ աւելի բուսաբանութեան  
 ուշադրութիւն ընծայել: «Հայեցարուք ի  
 շուշանն», որպէս թէ կ'ըսէ՝ ուշադրութիւն  
 ըրէք այդ դաշտային գեղեցկութեանց, չա-  
 փեցէք զանոնք արմատէն մինչեւ թերթին  
 վերջին ծայրը: Ծծեցէք անոնց անոյշ շուն-  
 չը, նկատեցէք անոնց կեցուածքին շնորհը  
 եւ գեղեցկութիւնը: Մտիկ րրէ՛ք այն շուն-  
 չը որ կ'ելլէ արեւելեան շուշանին սպիտակ  
 շրթունքէն նւ ամբիկեան շուշանին կարմիր  
 շրթունքէն:

Այսպէս կ'ուզէ Տէրը որ նկատենք մեր  
 շուրջը գտնուած գեղեցկութիւնը եւ բարձ-  
 րագոյն դասեր առնենք անոնցմէ:

Յաջորդ յողուածով մը աւելի պիտի խօ-  
 սինք այս նիւթին վրայ:

**ՅԱԿՈԲՈՍ ՃԷՃԻՉԵԱՆ**

**ԹՈՒՔԱԽՏԻ ՎՐԱՅ**

ԿԵՆՍԱԿԱՆ ԵՄՆՈՅԹԻԹԻԻՆՆԵՐ

Դրեց՝ ՏՈՔԹ. ՅՈՎ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ժողովուրդին հասկնալի լեզուով մը՝ բա-  
 ցատրուած է այնքան տարածուած եւ վը-  
 տանգաւոր այս հիւանդութեան բնութիւնը:  
 Յստակօրէն ցուցուած են վարակումէ գերծ-  
 մնալու պարզ կերպերն ու դարմանումի ա-  
 մէնէն բանաւոր եղանակները: Ամէն մար-  
 դու եւ ամէն տան անհրաժեշտ պէտքը:

Գրել՝ ՄԻՍՅՆ 60 ՓՅՐԱ

Իիմել՝

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ, Կ. ՊՈԼԻՍ,

Կալ ՀԵՂԻՆԱԿԻՆ, ՊԱՐՏԻՉԱԿ,

### ԸՆԹԱՑԻԿ ՆԻԻԹԵՐ

«ԽԱԹԵՐ» Հ Ա Մ Ա Ր

Անցածները լրագրի մը մէջ ըսուած էր թէ՛ Ազգ. Հիւանդանոցի ներքին պաշտօնեաներէն մէկը գործը կը ձգէ, և այդ նոյն գործին համար երեք անձեր կը ներկայացուին Հոգաբարձութեան՝ բարձրաստիճան անձերու յանձնարարութիւններով: Քիչ մը վարն ալ կ'ըսուէր թէ՛ Հոգաբարձութիւնը միտք ունէր մասնաւոր մէկը չի յատկացնել այդ գործին համար, այլ ո՛ր է կարգադրութեամբ մը գոհանալ:

Այդ լուրը կարդալէ վերջ՝ ես ապահով եղայ թէ՛ Պատ. Հոգաբարձութիւնը պիտի ստիպուի ընդունիլ նոր մարդ մը այդ պաշտօնին համար, քանի որ զօրաւոր յանձնարարականով կը ներկայանայ ան՝ կարեւոր տեղէ մը: Ու ասիկա առաջինը պիտի չըլլայ ապահովաբար՝ իր տեսակին մէջ:

«Խաբեր համար»ի հին դրութիւնն է աս, որուն դէմ միջոտ գանգատ կը յայտնուի, և շատ իրաւունքով: Ազգ. պաշտօնէութեան շուրջը մասնաւանդ սովորական կերպն է գործել խաբեր համար: Կարեւոր անձնաւորութիւն մը թուղթի կտոր մը կուտայ ո՛ր է մէկու մը ձեռքը, և այդ թուղթին տակի ստորագրութիւնը յարգելու և արժանապատուութիւնը չի վիրաւորելու համար՝ խնդիրքը կը կատարուի, թէեւ ատանկ մէկու մը երրեք պէտք մը չի տեսնուի իսկ:

Եւ չիտակը ըսելով, յանձնարարագրեր տուողները շատ աննախանձելի վիճակի մէջ կը գնեն իրենց դէմինը: Եթէ իրենց խօսքը չի քալէ՝ կը վշտանան. այս սլարագան աղէկ գիտեն յանձնարարականին հասցէին տէրերը. ուստի և կը շուարին կը մնան, չեն ուզեր գործ տալ դիմողին, բայց ան-

դին յանձնարարողին դիրքը կայ, ասիկա հաւանաբար պիտի վշտանայ եթէ անտեսուի իր խնդիրքը: Եւ ուստի թէեւ պէտք չի կայ ներկայացողին ծառայութեանը, բայց կ'ընդունուի՝ զրկողին սիրուն համար, անոր խաբերը համար:

Եւ հետեւութիւնը այն կ'ըլլայ որ՝ խաբեր և ո՛չ թէ արժանիքի համար ներս կը մտնեն սա՛ ու նա՛ ազգ. հաստատութենէն մարդիկ, որոնք գործ ունենալու չէին հոն: Ծոյլերու, պատրաստ հաց ուտողներու ընդունարան մը եւ սպաստանարան մը կը դառնայ այն ազգ. հաստատութիւնը, որ ժողովուրդին կը ներկայանայ տարբեր հանգամանքով մը:

Զօրաւոր յանձնարարականով՝ խաբեր համար տեղ մը ճարող անձը՝ ընդհանրապէս անօգուտէն աւելի գէշ տարր մը կը դառնայ իր գացած տեղը: Գիտէ թէ իրեն կռնակ ունի զօրաւոր մէկը, եւ անվախ ու անհաւատարիմ կը մնայ գործին մէջ:

Հանրային մեր շատ մը հաստատութիւններուն մէջ մուտ գտած են այս սղորակները, միջոտ ո՛ր է մէկու մը զօրաւոր յանձնարարութեամբ եւ ո՛չ իրենց արժանիքին գնահատուժովը: Ու միջոտ ալ փորձանք մը եղած են:

Շատ անգամներ բողոքի ու գանգատի ձայներ լսուած են այս մասին. եւ երբեմն կը պատահի նոյն իսկ որ մարդիկ իրենց դաւանանքին հակառակը կը գործեն երբ խնդիրը իրենց եւ իրենց իններուն շուրջը կը դառնայ: Այս այսպէս ըլլալու չէ սակայն:

Ջատագովուած սկզբունք մը պահպանելու եւ պահելու է ամէն պարագայի մէջ անխտիր: Եթէ մէյ մը բացառութիւններու ծայրը փրթի՝ ալ դժուար կ'ըլլայ օրէնքը գործադրել: Եւ ուստի մասնաւորապէս զգուշաւոր ըլլալու են անոնք, որ իրենց դէմը ելլողներուն մէյմէկ յանձնարարական տալով այս կամ այն հաստատութեան վրայ զրկե-

լու սովորոթիւնը ունին, գլխաւորապէս իրենց օձիքը ազատելու համար. եւ երկրորդ ուրիշին հաշիւին բարեբարներ հոշակուելու փափագով:

Ազգ. Հիւանդանոցը՝ մեր ո՛ր եւ է հանրային հաստատութենէն աւելի կը տուժէ յանձնարարուածներու երեսէն: Եւ քանի որ այս սողերուս առիթ տուողը Ազգ. Հիւանդանոցի շուրջը դարձող խնդիր մըն էր,

միտքս յայտնելու համար անիկա մէջ բերի մասնաւորաբար: Խաբէր համար շարժելու այս դրութիւնը սակայն չա՛տ ընդհանրացած է մեր մէջ առ հասասակ. եւ հետեւապէս արդիւնքներու անգոհացուցիչ վիճակներու առջեւ կ'արժէ հաշիւի առնել զերը այս յիսթեր համար»ին:

ՀԱՅԿ ԱԳՈՆՑ

Տ Ե Ր Ե Ե Ե Ե Ե Ր Ո Ր Տ Օ Ն Ը

Անտառներուն, պուրակներուն դասարկութիւնն ողբագին  
Նահանջելով՝ սեղի սրւալ սերելներու խմբակին,  
Եւ զըմբխսեայ, քարմ, նորածիլ հոծութիւն մը սերելի,  
Ծառին վըրայ, պարսէզին մէջ, ամենուրեք կ'երելի:

Տերելներուն սօնն է շրթեղ, ու ցընծագին կը խայսան,  
Մասաղաբոյս, դալար, քաւիւ սերելները բիւրազան,  
Եւ հըրնուանով մը մանկական, անգիսակից ու սիրուն,  
Միւս կը խայսան ունկընդդէմով անուր նուագի մ'խազերուն:

Շրթեղ սօնն է սերելներուն՝ մաքուր ու կոյս գլխովին,  
Զերծ արեւին սաք համբոյրէն, աղսոս շունչէն ալ հովին,  
Ու սերելները կենսալից, կայսառ, ինքնոյժ, քարմագեղ,  
Ալ կը սօնեն բերկրապասար բնութեան սօնը փառանդեղ :

Օ՛ն, խայսացէք հէք սերելներ փափուկ, մասաղ եւ աղուր,  
Վայելեցէք կեանքին արեւն, ձեր շրթեղ սօնն է այսօր,  
Վաղը անվրէպ պիտի հասնի, երբ հովերն բուռն եւ ուժգին,  
Պիտի հալածեն ձեզ հոս ու հոն, վերջ տալու ձեր կարն կեանքին :

ՅՈՎՀ. Ս. ԱԼԻԲՍԱՆԵԱՆ

9 Մայիս 1905, Ասաբազար

Յ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

ԱՌ ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱՁԵԱՆ

Աւեսաբերի Յորելեանի թիւին մէջ Ձեր գրած «Աւես. բեմը Թուրքոյ մէջ» վերնագրով յօդուածը կարգացի: Առաջին տպաւորութեամբ ուզեցի արձագանգ ըլլալ ձեր այդ գեղեցիկ թելադրութիւններուն:

Անցեալին մէջ մեր բեմերուն կատարած դերը մանրամասնաբար թուելնէդ վերջ շատ բնական շարքով մը Ձեր անկեղծ գրիչը կը մօտեցնէք մեծ եւ խիստ կարեւոր խնդրի մը: Դուք առաջինը կ'ըլլաք երբ Ձեր անաչառ գրչովը վարագոյրները քիչ մը վեր կ'առնէք: Պէտք չունիմ հիմա փառաբանելու Ձեր յօդուածին անկեղծութիւնը, գրելակերպը, խորհելակերպը, եւ մանաւանդ Ձեր քրիստոնէական բարձր եւ շինիչ մտածումները: Թող ընթերցողները կարդան զանոնք եւ պիտի տեսնեն իրողութիւնը:

Դուք, ազնիւ պատուելի, գործնական եւ դրութեանական միջոցներ կ'առաջարկէք մեր Աւետ. բեմերը աւելի փառաւոր, աւելի հրատարակելու եւ աւելի օգտակար ընելու համար: Այո՛, կեդրոնական եւ բարձրագոյն Աստուածաբանական ճեմարանի մը խիստ պէտք ունինք. ճեմարան մը ուր մեր երիտասարդները սիրով ու յօժարութեամբ վազեն դաստիարակուելու առողջ, ուղղափառ եւ հոգեւոր գաղափարներով, ուր հեղինակաւոր եւ բանիբուն ուսուցիչներ ըլլան կըրթիչները եւ ուր Աւետարանը քարոզելու համար պատրաստուող երիտասարդներ լեցունին վերին զօրութեամբ: Դարձեալ անհրաժեշտ է ընտրութիւն դնել ձեռնադրուող քարոզիչներու մէջ եւ պէտք է հաւանութիւն տալ այնպիսիներուն՝ որոնց սիրտն ու հոգին լեցուած է Քրիստոսի սէրով եւ որոնց վարելու եւ փարոզելու կարողութիւնը առարկութիւն չվերցնելու: Ասոնք շատ օգտակար

թելադրութիւններ են. սակայն ասոնցմէ աւելի գործնականը եւ էական թելադրութիւնը Ձեր առաջին առաջարկն է: Մեր միսինար եղբայրներուն դերը Աւետ. բեմերուն նկատմամբ, Շատ արդարացի կը գրանեմ Ձեզ երբ աւագ կարեւորութիւնը միսինար քարոզիչներու կուտաք մեր բեմերը լաւագոյն վիճակի մը վերածելու համար: Անհրաժեշտ է Աւեսաւանիչ միսինարներ ունենալ, որոնք ներհանալ եւ ներհանող լեզուով խօսին մեր բեմերէն, որոնք գրաւող, յուզող փարոզիչ ըլլան մեր ժողովուրդին եւ փայտ օրինակ մեր պատեօնեաներուն:

Ա՛հ, ո՛ւր էր թէ Պօրտը հասկնար, ո՛ւր էր թէ ըմբռնէր Ձեր այս թելադրութեան կարեւորութիւնը: Թոյլ տուէք ինձ պատուելի որ ես ալ նոյնը պնդեմ, նոյնը գոչեմ եւ մանաւանդ նոյնը խնդրեմ առ որ անկէ: Մեզի ներշնչեալ ու ներշնչող, յուզող ու գրաւող, փայտար եւ ուղղափառ, քարոզիչ և պերճախօս, քրիստոնէայ եւ Քրիստոսի սիրովը բռնկող, հոգիներու փրկութեանը համար խորհող եւ աշխատող միսինարներ պէտք են:

Մեր արդի միսինարները, ինչպէս գրած էիք, ամէն մէկը իր յատուկ գործը ունի, ամէն մէկը իր պաշտօնին գիտակից ըլլալով եռանդեամբ կ'աշխատի: Ասիկա ճշմարիտ է մանաւանդ Խարբերդի համար: Մէկը միսինարներէն՝ գօլէճին նախագահն է եւ իրեն յատուկ գործերը ունի այլապէս ու դժուար: Մէկը Աստուածաբանական ճեմարանին նախագահ եւ դասատու է: Մէկը սաներու եւ որբանոց-դպրոցներու շրջանառու է եւ մէկը բժիշկ: Այս միսինարները իրենց յանձնուած գործերովը զբաղած են: Ասոնք պէտք են և շնորհակալ ենք որ այսպիսի հաւատարիմ աշխատատեղերը զրկուած են մեզի, մեր կըրթական եւ բարեսիրական հաստատութիւնները յառաջ տանելու համար: Բայց բեմաւանք քարոզիչ, եկեղեցիներու այցելող և իր ժամանակը ու ամբողջ կեանքը այդ գործին համար նուիրող, առաքեալ միսինար:



ըսել կ'ուզեմ միսիոնար միսիոնար ոչ գոյ: Ի՞նչ, վերեւ յիշուած միսիոնարները եկեղեցիներու, չընկայ գիւղերու շէն այցելել, չհոն քարոզել. անոնց մէջ չկայ ատենախօս քարոզիչ: Խարբերդի միսիոնարները երբեմն կ'այցելեն եւ կը քարոզեն: Սակայն ո՞ր է Մր. Պըրաունի նման միսիոնար որ տարուան մեծագոյն մասը անցընէ եկեղեցիներու մէջ, ո՞ւր է այդպիսի պերճախօս քարոզիչ մը որ ժողովուրդը հոգեւորապէս վերացնէ, ազնուացնէ ու խրախուսէ: Պե՛տ է, անհրաժեշտ է միսիոնար Աւեսարանիչը: Վեր. Փափազեան, արդեօք ինչո՞ւ Ձեր այս կարեւոր յօդուածը չկրկնուեցաւ չչեչտուեցաւ այսչափ ատենէ ի վեր Ձեր պաշտօնակից եղբայրներէն: Ինչու դարձեալ Փրօֆ. Գրիգորեանի նման անձ մը կ'զգայ այս խնդրին կարեւորութիւնը և միւսները լուռ կը կենան: Ի՞նչու իրենց տուններուն մէջ, առանձին շրջանակներու մէջ նոյնը կը դաւանին, իսկ հրապարակագրութեան մէջ լուռ կը կենան:

Ինձի կուգայ թէ չունին այն համարձակութիւնը զոր դուք ունեցաք եւ զոր Բրօֆ. Գրիգորեան ալ ունեցաւ՝ հրապարակաւ մատնանշելու այս պէ՛տք: Մեր եկեղեցական գործին ամէն մէկ կայանէն այս նոյն ձայնը բարձրանալու է: Քանի որ միսիոնարներ մեր առաջնորդներն են եւ պիտի ըլլան բաւական ատեն, իրաւացի է այս սխալանջը: Ամէն կայանի համար անհրաժեշտ է Աւետարանիչ միսիոնար: Միսիոնար Աւեսարանիչներ, որոնք մեր թափուր բեմերը լքուած եկեղեցիները, վերականգնեն եւ շէնցընեն: Անձնական փորձառութեամբ գիտեմ թէ միսիոնարի մը այս սեսակ այցելութիւնը կ'օգեւորէ հոգեւորապէս խեղճ ժողովուրդները: Երանի թէ Իւրեակնի մէջ յաճախ երեւցող սրամիտ եւ անաչառ գրիչներ ու գրողներ՝ Հայկ Ագոնց եւ Ռոտոսթոցի Միհրանը՝ չարժէին իրենց գրիչները այս ուղղութեամբ եւ արձագանգ ըլլային Ձեզի:

Խարբերդ

ԱՐԱՄ ԵՐԷՅԵԱՆ



### ԿԵՆՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՆԵՐՈՍԵՆԵՐ

#### ՄՐՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԶԱՐԲԱՆԱՀՐԱՇ ԿԵՆՐԸ

ՄՐՋԻՆՆԵՐՈՒՆ զարմանալի ուժը  
Եւ երկարակեցութիւնը

Ո եւ է համայնագիտակ բառարան պիտի ըսէ ձեզի թէ, մրջիւն մը՝ հասակին համեմատութեամբ՝ աշխարհի արարածներուն էն ուժովն է: Եթէ մարդիկ իրենց ծանրութեան համեմատութեամբ անոնց չափ զօրաւոր ըլլային, պիտի կրնային թնդանօթի ումբերով պիլանոս խաղալ: Նոյնպէս հաստատուած է որ մրջիւններուն կեանքը իրենց չափ զարմանալի է: Այս բանը փորձելու համար Օրիորդ Ֆիլա շատ մը մրջիւններ առաւ ու անոնունը թողուց զանոնք բանտի մը մէջ և անօթութենէ մեռնելու դատապարտեց: Անոնցմէ մէկ քանին՝ որոնք պղտիկ ցեղին կը պատկանէին՝ 7 օրէն մեռան: Իսկ միւսները 50 օրէն եւ մէկ խոչոր մրջիւն մը կրցաւ վեր վար վազել առաւել քան հարիւր օր: Անոնք երբեք յայտնի չեն ըներ թէ սնունդի պակասութենէ կը տկարանան: Բայց յանկարծ ինքզինքնին կը կորսնցնեն եւ մէկէն ի մէկ անշունչ գետին կ'իյնան: Մրջիւններու տեսակ մը կայ որ կը կոչուի անօթութեան մրջիւն. ասոնք շատ քիչ կ'ուտեն ու 40 օր կրնան դիմանալ: Զարմանալի փորձ մը ի յայտ բերաւ թէ սնունդի պակասութիւնը մրջիւններու բոյնին մէջ պըղտիկներուն մանկութեան կէսը կը գողնայ եւ կ'ստիպէ որ մանուկը աշխատի: Մրջիւնի մը պատանեկութիւնը 20էն 100 օր կը տևէ կամ աւելի, կերակուրի եւ ջերմութեան քանակին համեմատութեամբ եթէ սնունդը քիչ է: Պզտիկ մրջիւնները կ'սկսին աշխատիլ, երբ հազիւ իրենց 2/3ը մեծցած են եւ այսպէս անոնք ճշգրտօք կը մնան որչափ որ ապրին: Մարդկային քաղաքակրթութեան տղամ

գերիներուն նման մըջիւն տղաները անօթուած են եւ աշխատութեան կը կորսնցնեն իրենց անուամբ եւ անկէ՛ հաքի տարիներուն հանգիստը երբեք չկրնար լեցնել այն պակասը որ մանկութեան ժամանակ գողցնել տուած են: Խմելը միշտ աւելի կարեւոր եղած է մըջիւնի մը համար քան ուտելը: Առանց ջուրի մըջիւնը քիչ ժամանակէն կը մեռնի: Օր. Ֆիլտ հաստատեց որ գրեթէ անկարելի է մըջիւնները խեղդել: Անոնցմէ շատերը 8 օր ջուրին տակ մնացին երեւութապէս մեռած, բայց երբ դուրս հանուեցան եւ շորացուեցան՝ նորէն թեւերնին պրկեցին և կենդանացան: Մըջիւն մը գրեթէ շատ փոթը չընէր ոտքը կորսնցնելը: Կորէ՛ երկու ոտքը եւ նորէն ասդին անդին պիտի վազվազէ մնացեալ 4 ոտքով՝ ամիսներ: Մեծաւորուհի մը գոհ ապրեցաւ 14 օր առանց իր փորին եւ երբեք իր ախորժակը չկորսնցուց: Բայց այս երկարակեցութեան փորձերը գերազանց աստիճանի մը հասան երբ մըջիւն մը 41 օր առանց գլուխի ապրեցաւ և այդ պզտիկ գլխահատեալ մարմինը 5 շաբաթէ աւելի աննպատակ թափառելէ հետքը, համոզում գոյացուց թէ, լաւ է մեռնիլ քան անգլուխ կեանք մը վարել:

Մըջիւնները կը սիրեն, կ'ատեն եւ կը յիշեն: Օր. Ֆիլտ 6 տարի ուսումնասիրելէ վերջը, համոզուեցաւ թէ մըջիւններուն կեանքը մեքենական չէ՛, թէ անոնք զգացում եւ գաղափարներ ունին. կը սիրեն եւ կ'ատեն. կը վշտահարին եւ կ'ուրախանան: Մըջիւն մը իր գորովը կը յայտնէ իր բարեկամին զայն իր պզտիկ լեզուովը լզելով. իր ատելութիւնը կը յայտնէ թշնամին իր բոյնին շուրջը քաջբռտելով, խածնելով եւ բզկտելով: Օր. Ֆիլտ առաւ երկու բոյներ. մէկուն ճիւղ անգթութեամբ եւ միւսին հետ ալ քաղցրութեամբ վարուեցաւ, որպէս զի անոնց յիշողութիւնը փորձէ. առաջինը սնուցանեց քաղցրահամ ճանճի զօթլէթներով, սարդի խորովածներով և ուտիճներու սալատով. թոյլ տուաւ որ մըջիւնները իր արփին մէջ կերակուր ուտեն եւ պտտին իր

մատներուն վրայ: Քիչ ժամանակուան մէջ անոնք բոլորովին վախնալէ դադրեցան. չխածին զինքը եւ կատուի ձագերու չափ ընտանի դարձան. իսկ գալով երկրորդ բոյնին՝ նոխազ քաւութեանն էր ան: «Փորձի համար, կըսէ Օր. Ֆիլտ, այն տեսակ չարչարանքներ ստեղծեցի անոնց, որ՝ ոտքերնունըրունցի եւ պաղ ջուրի մէջ ընկղմեցի»: Օր. Ֆիլտ անոնց բոյները կը խանգարէ, վերջապէս անոնց սովորական կեանքին մէջ փոփոխութիւններ կը մտցնէ, եւ արդիւնքը սա կ'ըլլայ որ՝ հրե ձեռքը կը դպցնէ մըջիւններուն՝ անոնք ահ ու սարսափով կը փախչին, ձեռքը կը խածնեն եւ յուսահատօրէն կը կուռին անոր հետ ու փախչիլ կ'ուզեն, կարծես ըսել ուզելով. «այս հսկան իր ճիւղային մատներով մեծ թըշնամի մըն է մեզի»: Օր. Ֆիլտ մեծաւորուհին իր բոյնէն զատեց հաւկիթները բացուելէն առաջ, այնպէս որ 52 օրէն հոքը երբ մըջնաւորները մեծցած էին, նորէն մեծաւորուհին իր բոյնը դրաւ. անմիջապէս ճանչցան զինքը եւ սրտագին բարի գալուստ մաղթեցին: Ուրիշ մեծաւորուհի մը եօթանասուն երկու օր զատեց իր ընտանիքէն: Այս պարագային պզտիկ վարանում մը երեւցաւ տղաքներուն մէջ, որոնք մեծցած էին այն համոզումով թէ՛ իրենք որբեր են: Քանի մը վայրկեան չկրցան ճանչնալ զինքը, բայց յանկարծ մեծ իրարանցում մը սկսաւ. ամէնքը սկսան ցատկուտել իր շուրջը. ո՛վ ուրախութիւն, իրենց երկար ժամանակէ ի վեր կորուսած մայրը գտած էին. սկսան զայն զգուել իրենց լեզուով եւ մէկ հատը ուրախութեամբ ցատկեց անոր ուտերուն վրայ. այդ օրը մըջնաբոյնին մէջ մեծ հանդէս կար: Ամէնէն զարմանալի փորձը մըջիւններու յիշողութիւնը փորձելու համար կատարուեցաւ: 1901ի ամառուան մէջ քարի մը տակէն 3 հատ մըջիւն վերցուեցաւ եւ բոյնի մը մէջ պահուեցաւ: 3 տարի վերջը մըջիւն ալ միեւնոյն քարին տակէն առնուեցան և նոյն բոյնին մէջ դրուեցան. նախապէս նորեկները կասկածով ընդունուեցան:

բայց կասկածը մէկ քանի վայրկեանի համար էր միայն :

«Յօ՞ քոյրերս, դոչեցին որքան ուրախ ենք ձեզ տեսնելուս. ի՞նչպէս են տունէն : Անուշտ այսչափ երկար ճամբորդութենէ մը վերջ անօթեցած էք. հրամմեցէք ճանճի կարկանդակէն» : Օր. Ֆիլ. կը կարծէր թէ արդարութեան պաշտօնեաներ ալ ունին մըջիւնները, երկու անգամ տեսաւ որ՝ մըջըջիւնները ժողովուեցան եւ անշարժ ժամերով կեցան շրջանակ մը կազմած եւ ահա իրենցմէ մէկը դուրս քաշեցին եւ սպանեցին : Ամէն անգամ իրենց երկուր մէկ խորհրդակցութիւնը մէկուր մահազճիտովը կը վերջանար :

Ինչո՞ւ մըջիւնները կը կռուին մինչեւ մահ : Արդէն զիտուած է թէ մըջիւնները վերջին ծայր մոլեռանդ հակաօտարականներ են եւ մըջիւնի մը մէկ ցեղը միշտ միւս ցեղին հետ յարատեւ կռիւի մէջ է : «Օտարական մը». ահա այս է իրենց ամէնէն սովորական գոչերէն մէկը . եւ որովհետեւ մըջըջիւնները 3500 տեսակ կը հաշուուին, ուրեմն պատերազմներն ալ միշտ անպակաս են : Գալով թէ ինչու կը կռուին, այս հանելուկը այնչափ դժուար էր որ Օր. Ֆիլտ իր պըզտիկ բարեկամներուն հետ 5 տարի ապրեցաւ լուծելու համար զայն. պատասխանը շատ տարօրինակ է եւ զոր ոչ մէկ բնագէտ կըրցած է տալ : Գ՛երեւայ թէ ամէն տղայ-մըջըջիւն՝ իր կեանքին առաջին 3 օրը միայն կը կրթուի. երրորդ օրուան վերջը իր կըրթութիւնն ալ կը վերջանայ. ահա անկէ ետքը քիչ կը սորվի, քիչ կը մոռնայ : Այն ամէն բաները որոնց հետ ընտանի է՝ իբր լաւ կը ճանչնայ. իսկ այն ամէն բաները որոնք նոր են՝ վնասակար : Ինչ որ կը ճանչնայ՝ աղէկ կը նկատէ, ինչ որ չճանչնար՝ գէշ : Ամէնէն ապահով ժամանակը մըջիւնի մը հետ բարեկամանալուն՝ իր կեանքին առաջին 3 օրերն են : Անկէ ետքը իր վարժարանին շրջանը կը լրանայ : Ալ ամէն բան սորված է : Օր. Ֆիլտ շատ անգամ փորձեց այս բանը, բոյնի մը մէջ հաւաքելով մանուկ մըր-

ջիւններ 5 կամ 6 տարբեր տեսակէ. ամէն անգամուն ալ անոնք իրարու հետ հաշտ ապրեցան եւ իրարու բարեկամ մեծցան : Բայց երեք օրը անցնելուն պէս՝ յարձակեցան ու սպաննեցին այն ամէն օտարականները որոնց հօտը չէին ճանչցած :

Եթէ կարելի ըլլար ամէն մըջնազգիներէն պզտիկները հաւաքել ու ամէնը՝ 3500ը մէկտեղ բերել, անոնք իրարու հետ ամենայն երջանկութեամբ պիտի ապրէին :

Երբեմն վստահ չեն թէ իրենց մը թըշնամի՞ է թէ բարեկամ : Այս տեսակ պարագաներու միջ իրենց խուզարկու եւ շուարած նիստ ու կացը շատ դուարձալի է : Անգամ մը գեղին մըջիւնի մը հաւկիթը սեւ մըջիւններու բոյնի մը մէջ գետեղուեցաւ : Թխտուելէ ետքը այս փոքրիկ մըջիւնը թափառեցաւ իր նմանները փնտռելու համար : Աեւ մըջիւններէն պզտիկները բանէ մը չկասկածեցան, բայց մեծերը զայն բռնեցին ու կրտոր կտոր բրին :

Իբրեւ երկրորդ փորձ մը, Օր. Ֆիլտ երկու մըջիւն իրենց մօր երկրորդ ընտանիքին մէջ զրաւ : Այս երկու տարիքօտ մըջիւնները անմիջապէս ճանչցան իրենց զեռատի քոյրը, բայց դեռատիները ուրիշ ժամանակ հանդիպած չըլլալով անոնց, եւ որովհետեւ մըջիւնի մը հոտառութիւնը միայն տարիքին հետ կը փոխուի՝ յարձակեցան վրանին եւ բզկտել ուզեցին : Բայց երկու մեծ մըջիւնները հասկնալով իրենց քոյրերուն սխալը, թարմ կերակուրներ տուին ու կտրծես կ'ազաչէին :

«Մեզի չե՞ք ճանչնար, մեմք ձեր քոյրերն ենք, մեմք ալ միեւնոյն մօռմէ ենք : Ինչո՞ւ մեզի չեք ընդունիր» :

Վերջապէս պզտիկները հասկնալ ձեւացուցին :

«Թե՛րեւս, մտածեցին, այս երկու օտարականները հեմարիք կը խօսին» . դադրեցուցին իրենց յարձակումները, եւ Օր. Ֆիլտ զատեց երկու մեծ մըջիւնները՝ որոնց հանդէպ այնքան վարժանալի վարժուեց մը ունեցած էին իրենց զեռատի քոյրերը :

ՄՐՂԻՆՆԵՐԸ ԻՔՐ ՏԱՆՏԻԿԻՆ

Մրջնաչխարհին մէջ մրջիւնները ամէնէն լաւ տանտիկիններն են: Տուներնին կը մաքրեն յունվար ամսուան առաջին օրէն մինչև դեկտեմբեր ամիսին վերջին օրը: Իրենց բերնով կը կրեն ջուրը, տնական աշխատութիւններու համար և աղտոտութենէ կը սոսկան: Իրենց սննդառութեան համար մասնաւոր սենեակ մը ունենալ կ'ուզեն: Աղտոտութիւնները տունին մէկ անկիւնը կը դիզեն: Տունին մէջ աւատ ջուր պէտք է որ ունենան, և ամէն արհեստական բոյնի մէջ թաց սպունգի մը պէտք ունին: Երբ իրենց պզտիկներէն մէկը իւղէ կամ տիղմէ աղտոտի, այդ սպունգով լաւ մը կը մաքրեն:

Իրենց է՛ն սիրած կերակուրը ճանճն է, Մրջիւններուն համար արքայութիւնը հո՛ն է՛ ուր է՛ն շատ մեռած ճանճ կը գտնուի: Եթէ ճանճ չգտնեն՝ մամուկով, հ սցով, խնձորով, պանանայով, գետնախնձորով, անուշադէններով, մեղրով ալ կը գոհանան:

Մրջիւնները տղայութեան ատեն կըրթուած սա:տուներու ձեռքով կը մեծցուին: Բայց քանի մը բոյներու մէջ այս ստնտուները նոր մեթոտ մը գտած են իրենց զըզտիկները սնուցանելու: Իրենց պզտիկներուն չորս կամ հինգը բացուած ճանճի մը մարմինն շուրջը կը զետեղեն՝ գլուխները դէպի անոր մարմինին դարձուցած, անանկ որ առանց իրենց օգնութեան՝ անոնք կըրնան կերակուրի: Կերակուրի մասին մըրջիւնները խիստ բժախնդիր են:

Այն մրջիւն նպարավաճառը՝ որ իր ծախած փոշի շաքարին մէջ աւազ կամ փոշիացած մարմար խառնէ, անմիջապէս կը բռնեն զինքը ու կը փշքտեն:

Օր. Ֆիլտ կըցաւ հաստատել ասիկա շատ զարմանալի եզանակով մը: Ճանճի կամ ուրիշ սնունդի կտորներու մէջ թոյն դրաւ այնքան քանակութեամբ՝ որքան մրջիւններուն ամբողջ գաղթականութիւնը ջնջելու

կրնար բաւել: Անօթի մրջիւնները կերան, բայց որքան մեծ եղաւ Օր. Ֆիլտի զարմանքը երբ մրջիւնները ուտել ուզեցին նորէն: Ահա՛ հոս էր հանելուկը: Բոյնը լաւ մը քննեց, եւ անկիւն մը երկու պզտիկ կարմիր ու կապոյտ գնդակներ գտաւ ու քննելէ վերջ հաստատեց որ՝ իր զրած թոյնն էր: Մրջիւնները, սնունդը թոյնէն զատած էին:

Մրջիւն մը կը նախընտրէ մեռնիլ անօթութենէ՝ քան իրերակերութիւնը. մեռնիլ կ'որոշէ ու իրեններուն հակիթը չուտեր:

Միայն բացառութիւն կը կազմեն Մեքսիկայէն գտնուած մրջիւնները՝ որոնք մեղրիմրջիւն կը կոչուին: Ասոնք սովորութիւն մը ունին. ամէն ամառ իրենց ընկերներէն մէկ քանին մեղրով կը մեծցնեն ու կը գիրցնեն. եւ երբ ձմեռը կուգայ եւ սնունդը կը քիչնայ, գէթ մրջիւնները անմիջապէս կը մորթուին ու կ'ուտուին:

ՄՐՂՈՒՍԱՐԻՆ ԲՆԱԿԻՅՆԵՐԸ

Մեր խոշոր աչքերով՝ մրջիւնները ամէնն ալ իրարու կը նմանցնենք, բայց իրողութիւնը սա՛ է որ՝ այնքան տարբեր տեսակ մրջիւններ կան՝ որքան տարբեր տեսակ ձիեր: Օր. Ֆիլտ մրջիւնները զանազանց ներկելով անոնց կոնակը զանազան գոյներով: Անոնց բուն անունը չգիտնալով, ան կոչեց զանոնք կարմրախայտ, սպիտակախայտ, կապտախայտ եւ այլն:

Ձոր օրինակ կարմրախայտը մազայարդարն էր: Երբեմն ժամեր կը վատնէր իր արդուզարդին համար: Մրջիւնը ոտքին ծայրը զանազան սանտրեր ունի, որոնցմով կը մաքրէ ու կը յղկէ իր զէմքը ու մարմինը:

Երբ կարմրախայտ մը բռնուեցաւ, անմիջապէս խածնել սկսաւ բռնողին ձեռքը, և նորէն գետինը դրուելէ ետքը՝ առնուազն տասնեակինք վայրկեան վատնեց իր արդուզարդին համար, զոր ճիւղալային կարծր մատներ աւրչտկեր էին:

Մրջիւններէն ումանք աւելի կոռուսէր

են քան ուրիշներ, Երբեմն կուիւ մըն է կը սկսի ու ասիկա առանց պատճառի: Խաղաղասէր մըջիւնները երբեք ուշադրութիւն չեն ըներ այս տեսարանին ու իրենց գործը կը շարունակեն, մինչ երկու կռուողներէն զօրաւորագոյնը կը յաղթէ: Մըջիւնի մը վարնալը շատ դիւրին է տեսնել: Ճիշդ յովազի մը պէս զետինը կը սողոսկի, իսկ եթէ վախը սարսափի փոխուի՝ գնդակի մը պէս կը կլորուի ու չգիմադրեր թշնամիին:

Մըջիւններն ալ ցաւ կ'զգան: Մեծաւորուհի մըջիւն մը իր վիշտը արտայայտեց իր մեռած ամուսինն համար, եւ ապացոյց թէ ատով իր սիրտն ալ կը հոտարի: Անոնք իրենց սիրահարական առաջին օրերէն ի վեր ամենայն գորովանօք իրարու հետ կ'ապրէին Հարիւր օրուան երջանիկ կեանքէ մը ետքը մէկը մեռաւ: Մեծաւորուհին գլուխը անոր անշունչ մարմինին վրայ ծռեց ու երբ մեռած ամուսինը տարին, անիկա անմխիթար ազդին անդին վազվառեց յուսահատօրէն:

Ամէնէն տարօրինակ փորձերէն մէկն է մըջիւնի մը մաքնիսականութիւնը: Օրֆիւտ օր մը դեղին մըջիւն մը դրաւ հինգ հատ ուրիշ մըջիւններու մէջ. այս դեղին մըջիւնը ուժեղ օտարական մըն էր, Բայց մեծ եղաւ իր զարմանքը երբ տեսաւ որ անոնք բան մը չէին ըներ ու քարէ արձանի պէս կեցած զայն կը դիտէին: Քառասունեակինգ վայրկեան վերջը դեղին մըջիւնը վերցուց եւ տեսաւ որ միւսները սկսան զատուիլ ու վար վեր վազել: Ի՞նչ միսթիք ու անհասկընալի զօրութիւն ու ազդեցութիւն բանեցուցած էր այդ դեղին մըջիւնը: Ահա այն հանելուկներէն մէկը՝ զոր ապագան միայն պիտի կրնայ պարզել:

«Անոնց բոլոր գաղտնիքները պիտի հասկնամ», կ'ըսէ Օրֆիւտ:

(The Munsey)

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ



ՄԱՐԶՈՒԱՆԻ

ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

Ուշադիր քննող մը պիտի տեսնէ թէ, Պէպէքի Աստուածաբանական ճեմարանը Մարզուան փոխադրուած օրէն մինչեւ այսօր, յաճախ դիտողութիւններ եղած են անոր նկատմամբ—մերթ անդր քան զչափն—պաշտօնական ժողովներու, հոգեւոր միութիւններու, Սինդիկեւ լրագիրներու մէջ: Այդ քննադատութիւնները բոլորովին ապարդիւն չեն եղած: Միսիոնարական տարեկան գումարումներու մէջ նկատողութեան առնուելով, ջանք չէ խնայուած միջոցներուն ներածին չափով ճեմարանը բարւոք մատակարարութեամբ մը նպատակայարմար ընելու:

Հայկ Ազոնց անցեալ օր այս սիւնակներուն մէջ իբր դարման կ'առաջարկէր Մարզուանի եւ Մարաշի Աստուածաբանական ճեմարանները միացնել, փոխանակ երկու տկար ճեմարաններու, մէկ բայց զօրաւոր ճեմարան մը ունենալու համար: Հարկ չկայ ըսել թէ Հայկ Ազոնցի այս թելադրութիւնը խիստ գործնական է, որուն ես ալ կը ձայնակցիմ: Վասնզի ի՞նչ կը նշանակէ տկար ճեմարաններ ունենալ, որուն աշակերտելու փափաքողներ կը պակսին—կ'ըսուի թէ ուսուցիչներու թիւին հաւասար աշակերտներ կան գրեթէ—եւ նոյն այդ աշակերտներն ալ, յաճախ իրենց ուսումը կատարելագործելու համար պէտքը կը տեսնան Եւրոպա կամ Ամերիկա երթալու:

Միսիոնարական տարեկան ժողովը, որ այս տողերը գրած ատենս մայրաքաղաքին մէջ իր տարեկան նիստը կ'ունենայ, փափաքելի է որ պահ մը իր լուրջ ուշադրութեանը առնէ այս խնդիրը եւ փոխանակ անջատ անջատ բայց տկար ճեմարաններու, Մարզուանի եւ Մարաշի եւ թերեւ Խարբեր-

զի ճեմարանները միացնելու կարելիութիւնը նկատի առնէ եւ կեդրոնական գորսուոր եւ միացեալ Աստուածարանական ճեմարան մը ունենալով, զայն մասնագէտ՝ կարող աստուածարան ուսուցիչներու խնամքին յանձնել որոյչէ, որպէս զի աւելի պատեհութիւն տրուի ուսանողներուն՝ Ս. Գրոց բնագիր լեզուները — Երրայեցերէն եւ Յունարէն — լաւագոյն կերպով ուսանելու, աւելի ուժ տրուի եկեղեցական տոհմային եւ ընդհանուր պատմութեան, աւելի ուժ տրուի գիտական ու քննական աստուածարանութեան, եւ այն օտեն ոչ միայն ուսանողներուն թիւը պիտի շատնայ, այլ նաև անոնք չըջանաւարտ ըլլալէն վերջ, պէտք չպիտի տեսնեն իրենց ուսումը կատարելագործելու համար Եւրոպա կամ Ամերիկա երթալու: Փոխանակ զանգատելու թէ մեր երիտասարդները չեն ուզեր Աստուածարանական ճեմարանի աշակերտիլ, աւելի հրապուրիչ եւ նպատակալարմար ընենք զանոնք եւ այն ատեն լեցուն պիտի ըլլան ճեմամարանները:

Մ Ի Հ Ր Ա Ն

Գիտէ՞ք որն է աշխարհի ամէնէն շատ սոկի արտագրող երկիրը: Աւստրալիան է: Յետոյ կուգան Միացեալ Նահանգները եւ Հարաւ. Ափրիկէ: Ամերիկայի արագրութիւնը կը նուազի, մինչ Աւստրալիայինը իր գերագոյն աստիճանին է հասած: Քանստա, հակառակ իր Քլոնտայքի սոկեհանքերուն կարեւոր տեղ մը չգրաւեր սոկիի արտագրութեան գործին մէջ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐՐԱՆՈՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՉԱՐԸ

Յետաձգուած է և տեղի պիտի ունենայ Յունիս 6/19ին Պրուսայի մէջ, կը խնդրուի զրկել այլևայլ ձեռագործներ և իրեղէններ: Անոնք որ մասնակցած չեն այս որբախնամ ձեռնարկին, ահա պատեհ առիթ մը: Գարբիէլ էֆ. Ս. Գարբիէլեան կ'ընդունի ու է նուէր: Հասցէ՝ թիւ 27, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս:

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Ո Ի Ռ Ե Ն Ր Ն

«Բարելոնի գետերուն քով՝ հոն կը նրստէինք, ու Սիօնը միաքերնիս բերելով կուլայինք: Անոր մէջ ուռիներուն վրայ կախեցինք մեր քնարները:» Սաղ. ՃԼԷ. 1, 2:

Այսպէս երգեց սաղմոսերգուն Բարելոնի գերեալներուն վրայ, և իր երգը էն ծանօթ ուռենիներէն մէկուն կցած է վերոյիշեալ մեծ քաղաքին անունը, ու այս պարագայէն ծագում տանելով սովորական լալկան ուռենիին բուսարանական անունն է Solix Babylonica:

Հաւանօրէն գերեալները կախեցին իրենց քնարները լալկան ուռենի ըսուած ծառին վրայ, եւ կը կարծուի թէ այս տեսակը Ասիոյ մէջ ծագում առած է: Լալկան ուռենին նաեւ կը կոչուի Նարոլէոնի ուռենին, վասն զի տիեզերահռչակ Քորսիքացին շատ բերկրանք կը զգար այս տեսակ շքեղ ուռենիէ մը որ կը գտնուէր Սք. Հեղինէ ամայի կղզին. և այս ուռենիին ստերէն տարուելով յառաջ եկած են շատ ուռենիներ Միացեալ Նահանգներու մէջ:

Ուռենիներու ցեղը կը ներկայացնէ այլ եւայլ հօնագրութիւններ: Ուռենին խորհրդանշանն է թէ վիշտի եւ թէ վայելչութեան: Առաջին յատկանիշին պատճառը անտարակոյս ճԼԷ. Սաղմոսին մէջ գտնուած վերոյիշեալ ակնարկութիւնն է: Վերջին յատկանիշը պարզապէս ուռենիին ճօճող երկայն վարսերուն իրական շնորհագեղութենէն առնուած է:

Ուռենիի ճիւղերը խիստ դիրքաբեկ են, վասն զի կը կոտորին եւ զունէն կը բաժնուին եթէ միայն դաչուի անոնց: Բայց եւ այնպէս ուռենիի տեսակ մը կայ որ կը հայթայթէ տոկուն եւ դիւրաթեք ստեր, որոնցմէ կը հիւսուին տեսակ տեսակ կողովներ եւ սակառներ: Ուռենին թէեւ ունի բարակ ճիւղեր, ցանցառ, յօժոյն սաղարթներ եւ տխուր արտաքին տեսք, սակայն

անկէ կը փղծկի կորով ու կեանք: Ուռե-  
նիին ամէն տեղ տարածուիլը իր դիւրամա-  
ծութեան եւ կենսական ոյժին պատճառաւ  
է, որով պզտոր գետի մը մակերեւոյթին  
վրայ տատանող կտորած ճիւղ մը կ'արմա-  
տանայ եւ կ'աճի աւազուտ գետափին վրայ,  
ուր ուրիշ ո եւ է ծառ չկրնար մեծնալ,  
կեանքի պայքարը վզելով եւ զօրութիւն ու  
գեղեցկութիւն քաղելով այն նոյն տարրէն  
որուն հոսանքին եւ հեղեղներու աւերներուն  
կը դիմադրէ քաջութեամբ: Ուռենին, իբր  
փայտ, քիչ տոկունութիւն ունի, կ'աճի շու-  
տով ու կը փճանայ շուտով, բայց եւ այն-  
պէս ուռենին կը հայթայթէ փտելէ պաշտ-  
պանող կարեւոր տարր մը, որ կը գտնուի  
ուռենիին լեղի հիւթէն հանուած թթուին  
մէջ. այն է սեյլիսիլիֆ կոչուած թթուն, որ  
ուռենիի կեղեւէն կը շինուի, եւ թթուելէ  
ու փտելէ կը պահպանէ նիւթերը. նաեւ  
կարեւոր հականեխական մըն է բժշկակա-  
նութեան մէջ:

Նորարդորջ ուռենին, որ ճկուն և առե-  
րեւոյթս փափուկ է, կարծես չխոստանար  
թէ քա՛ ի մը տարիէն կոշտ ու զօրաւոր կոճղ  
մը պիտի կանգնի հոն ուր դիպուածաւ  
անկուած էր, երբ կտորած ճիւղ մըն էր:  
Ուռենիին գոյնը հիանալի է, այս վիշտի եւ  
ցաւի ծառը կը հայթայթէ զուարթ երգ մը  
տարուան իւրաքանչիւր ամսուան համար,  
եւ կը հազնի կանանչներ, գորշ գոյներ,  
դեղիններ եւ թխագոյներ, մինչեւ անգամ  
կը կը գեղեցկացնէ ձմեռուան դաշտանկարը  
բոցավառ նարնջագոյն ու շողշողուն կարմիր  
երանգներով, որոնք կը նշմարուին ձիւնին  
ընդ մէջ, երբ գեռ ոչ ոք լըջօրէն խորհած  
է թէ գարունը մօտալուտ է, լալկան ուռե-  
նիին երկայն ճղիկները կը ստանան սիրուն  
գեղնկէկ կանանչ գոյն մը. եւ այս նոյն ճը-  
ղիկները իրենց կանտնչ տերեւները կը պա-  
հեն ձմեռուան հովին ու փուքին դէմ, երբ  
ուրիշ ծառեր կորսնցուցած են իրենց տե-  
րեւները սառոյցին ազդեցութեան տակ:

Ուռենիներու մեծ մասը աւելի թուփեր  
են քան թէ ծառեր, եւ շատ տեսակներ  
կան: Այս զանազան տեսակները նախ յա-  
տուկ էին արեւելեան կիսագունտին, բայց  
հետզհետէ տարածուած են Եւրոպայի եւ  
Ամերիկայի մէջ: Նիակարայի ջրվէժին շուր-  
ջը, Ամերիկայի գեղեցիկ ճեմավայրերուն մէջ,  
կղզիներուն վրայ, ծփացող ջուրին երեսը,  
կան բազմաթիւ ուռենիներ, զորս մարդիկ  
տնչած են, բայց եւ այնպէս նուազ գեղե-  
ցիկ չեն քան անոնք զորս բնութիւնը յա-  
ռաջ բերած է ինքնին:

Ուռենին իր ընտանիքէն եղող կաղամա-  
խիին նման կը ճիւղահատուի եւ կը յարդար-  
ուի ամէն տարի, եւ իր առատ ոյժին պատ-  
ճառաւ անմիջապէս կը վերստանայ կեանք,  
ուրիշ ծառերէ աւելի զօհացուցիչ կերպով:

Եթէ ուռենին դիտենք, անոր մէջ պիտի  
գտնենք շատ գնահատելի բաներ: Հաճելի  
է դիտել ու վայելել ձմեռուան եղանակին  
մէջ ոստերուն ու կեղեւին զանազան գոյ-  
ները. գարունին ուռեցող կոկոնները տար-  
բեր տարբեր գոյներ ու յատկութիւններ ու-  
նին. քիչ ատենէն այս կոկոններէն յառաջ  
պիտի գան ծաղիկներու փունջեր, որոնց կը  
յաջորդեն զանազան գոյներ, տեսակներ, ու  
ձեւեր ունեցող տերեւներ, ինչպէս փայլուն  
կանանչ, բաց գորշ, կանանչկէկ գեղին: Երբ  
ձմեռը կուգայ, հակապատկերներու շարք  
մը կը ներկայանայ այն կերպին մէջ՝ որով  
ուռենիի զանազան տեսակները կը կորսըն-  
ցընեն իրենց տերեւները եւ կը պատրաս-  
տուին հանգիստի ժամանակամիջոցին, որ  
ատեն կոկոնները կը հասունան, եւ ձմեռ-  
ուան գոյները նորէն կը սկսին փայլիլ:

Ո եւ է տեղ կրնանք դիտել այս երե-  
ւոյթները, վասն զի ուռենին մասնաւոր  
երկրի մը յատուկ չէ, այլ կ'աճի ամէն տեղ,  
ուր որ իր տարածուն արմատները կրնան  
գտնել խոնաւութիւնը զոր կը սիրէ: Ուռե-  
նիի ճիւղերը կամ կը կախուին եւ գետինը  
կը քսուին, եւ կամ կը բարձրանան օդի

մէջ իբր 100 ոտք: Բուսարանները կ'ըսեն թէ աշխարհիս մէջ կան ուռենիի 160 տարբեր տեսակներ: Ուռենիի շատ հին է. վասն զի կաւճային ժայռերու մէջ գտնուած տերեւներու հետքերը կը ցուցնեն թէ ուռենիին էն հին ծառերէն մէկն է:

Ուռենիին սովորական ծառ մըն է, եւ ուստի անտեսուած: Դիտել ուռենիին գարնան ու ամառուան եղանակներուն մէջ երբ գեղեցկացած է ծաղիկներով, կազդուրուիլ անոր սփոփիչ գոյնովը ձմեռուան ցուրտին ատեն, նկատել անոր զուարթութիւնը եւ չուքը, տեսնել թէ ինչպէս հովը տակնուվրայ կ'ընէ անոր նուրբ ճիւղերը եւ կը դարձնէ վայելչագեղ տերեւները, բնութեան ճշմարիտ սիրահարի մը համար կ'արժէ դիտել բոլոր ասոնք, որոնց միջոցաւ կարող կ'ըլլայ աւելի աղէկ գնահատել այս գեղեցիկ աշխարհը:

(Բաղեց)  
ԷԼԻՉ

**ԵԳԵՄՆ ՈՒ ԳԵԹՍԵՄԱՆԻՆ**

«Երկու պարտէզներ, Եգեմն ու Գեթսեմանին, որոնց մէջ գործուեցան մարդկութեան անկումին եւ փրկագործութեան իրողութիւնները»:

Օրերու սկիզբ սը մը՝ Խորհուրդ մը «Որ է»ին գանկը փոթորկեց, ուրկէ համայն տիեզերքը ծնաւ:

Խաւարի ծոցէն լոյսը վերակոչեց. իր «թող ըլլայ»էն մշուշները թաւալող գունդեր ծնան, անհունութիւնը լուսաւորող ջահեր կախուեցան անջրպետին մէջ, ջուրերը կենդանութիւն յղացան, հողը բջիջներու կուտակումներ արտադրեց, ու նաև մարդը, որ Աստուծոյ շունչով կենդանացաւ:

Մարդը վերջարանը եղաւ ստեղծագործութեան, պետք արտրչագործութեան:

«Եւ Աստուած տեսաւ իր ըրածը եւ ահա

շատ բարի էր»: Կենդանիներու ովկէանսին մէջ մարդը հիւլէ մըն էր, ոչնչութիւն մը անոնց բիրտ ոյժին հանդէպ, գիտակից էակը տկար էր մարմնով բայց զօրաւոր էր մտքով. փոքր էր՝ բայց մեծ, անցաւոր էր՝ բայց յաւիտենական. մինակ մարդուն ճակտին վրայ մեծութեան զրոշմը կար:

Մարդը մինակ, այդ ովկէանին մէջ վայրի կենդանիներէն չըջապատուած՝ նշանակելի տարբերութիւն մը ունեցած չպիտի ըլլար. պէտք էր անմահութեան դրոշմը ունեցող, Յաւիտենականին տիպը կրող, կեանքի դառնագոյն օրերուն նեցուկ հանդիսացող ընկեր մը, որուն միջոցով երկրագունտը պիտի ոգեւորուէր:

«Աստուած Ադամի վրայ խորունկ քուն մը բերաւ եւ անոր կողին ոսկորներէն մէկը առաւ եւ կնիկ շինեց ու զայն Ադամին բերաւ»:

Եգեմի կապոյտ երկինքին վրայ արեւը կը շողար լուսարձակ. հեռաւոր անկիւններու մէջ կենդանիները կը պարէին. կանանչ գորգը վարդարող, արեգին ժպտող ծաղիկները բոյր, մարգերու մէջ թագչող, ծառերու բունները համբուրող առուները՝ մրմունջ, սոխակը՝ երգ, Աստուած՝ սէր էին: Եգեմի, անմահ պարտէզին մէջ արտասովոր ոգեւորում մը կար, վասն զի առաջին հարսանիքը տեղի կ'ունենար, որուն հարսներուն երը հրեշտակները, հանդիսականները սուրբերը և քահանան Աստուած էր:

Կեանքի վայելքներովը արբիռ, անհոգ ու անգիտակից իրենց գոյութեան նպատակին, Եգեմի հովանիներուն տակ, յօրանջներու կուտակումներուն մէջ, անտարբերութեամբ պատանուած, անգործութեան, որ բոլոր աղէտից մայրն է, մատնուած, քանի որ մրափ մը կ'առնէին, արգէն միւս կողմէն մեծ անկման դաւը կը նիւթուէր:

Վայելքներու ովկէանին մէջ մարդուն ճակատագիրը փոխուեցաւ, ուրախութեան բաժակին մէջ տխրութեան օշինդրը քամուեցաւ: Եգեմին նայող արեւը տեղունեցաւ,



արեւին ժպտող ծաղիկները մահուան դալ-  
կութիւնը, ծառերը աշնայնի տխրութիւնն  
ու տփուկութիւնը զգեցան, թռչունները  
մեղամաղձիկ խաղերու փոխեցին իրենց ա-  
զու յանկերգը, այն օրէն ի վեր երբ  
գրախտին մէջ անկումս տեղի ունեցաւ,  
որուն ազդեցութիւնը դարերու ճակտին ան-  
ջինջ մուր մը քսեց, վասն զի մեղքը Եղեմի  
կոյս անբժուութիւնը ազարտեց, զի մահը սը-  
պըրդեցաւ Եղեմէն ներս:

Մեղքը մահ ծնաւ. մահը իր դալուկը  
դրոշմեց ծառին ու ծաղիկին, մրջիւնին ու  
միջատին, մարդուն ու մարգիին, թռչունին  
ու կենդանիին վրայ:

Գեթսեմանին, ուր հազիւ քանի մը ծա-  
ռեր կը հովանաւորեն նշխարքը Իսրայէլի  
փառքերուն, հողակոյտերը անմահներու,  
ուր յիշատակներ միայն կը հոսին, ծառէն  
ու ծաղիկէն, թռւփէն ու թփենիէն, ուր ա-  
մէն բան մասունք է, ամէն բան նուիրա-  
կան, ամէն բան սրբութեան դրոշմը կը կրէ,  
ուր ապառաժներէն սէր կը յորդէ, ծաղիկ-  
ներէն անմահութիւն կը բուրէ, հին դարե-  
րու մէջէն աւետեաց ճառագայթներ յորդ  
տողանցումներով մարդկութեան կ'առաքէ:

Մարդկութեան ճակտին քսուած մուրը  
զոր ի զուր ջանացած էին ճերմկցնել մար-  
դիկ, այն քստմնեցուցիչ ոճիրը զոր ի զուր  
աքնած էին քողարկել եւ որ աւելի ահաբե-  
կիչ հանգամանք մը կ'առնէր, մարդկութեան  
գերագոյնի մը գօրութեան հետապնդումի  
ծիղին մէջ, վասն զի անմահը անմահու-  
թեան կը ձգտի ու երբ իր որոնման ար-  
դիւնքը յուսախաբութիւն կ'ըլլայ չարիքէն  
յոռեգոյնին կը դիմէ:

Գեթսեմանին՝ այդ ստորնութեան մէջ  
ղեզերող, մեղքի ճնշումին տակ անէացող,  
թշուառութեան բախիղներուն մէջ խարխա-  
փող էակներուն, Եղեմի անկումին կնիքը  
կրող Ադամի որդիներուն ազատութիւն  
կ'աւետէ:

Եղեմի հեշտութեանց, կեանքի դիւրա-

սան, երջանիկ պահերուն մէջ, ուր մե-  
ղուն խայթոց, օձը թոյն չունէր, ուր կեան-  
քի պայքարը չէր մտրակէր ասունն ու ա-  
նասունը, ուր Աստուած զեփիւոով կը շնչէր,  
որոտումով կը խօսէր, կայծակով կը շանթէր,  
տեղի ունեցաւ անկումը, որ՝ պատճառ ե-  
ղաւ մարդուս վիշտին ու տառապանքին, ար-  
տասուքին ու մահուան, մարդուն ինկած  
պատէլը վերականգնելու, մեղքին գծած  
խորշումներն ու կնճիռները անհետացնելու,  
վերջապէս մարդկութիւնը ազատագրելու  
համար՝ Գեթսեմանի մը պէտք էր Եղեմի,  
ցորեկուան, զով հովանիներուն տակ, հեշ-  
տութեանց ովկէանին մէջ գործուած մեղ-  
քին գարչահոտութիւնը շէշքեացնելու հա-  
մար, գիշերուան, մութ պահերուն մէջ  
արիւն քրտինքի, դժնդակ վիշտերու, ան-  
հուն տանջանքներու վայր մը պէտք էր իր  
ամբարտեան բոյրին մէջ անհետացնելու մեղ-  
քին գարչահոտութիւնը եւ ատ՝ Գեթսեմա-  
նին էր:

Եղեմի աննման հարսնիքին յաջորդեց  
մեծ անկումը, Գեթսեմանիի անըմբռնելի  
տաժանքներուն յաջորդեց աննման բարձ-  
րացումը. մարդկութեան կորսուած դատը  
Աստուած մը միայն կարող էր շահիլ: Խա-  
ւարին մէջէն Յիսուս կրցաւ անցնիլ, Ադա-  
մին սխալը դարմանելու համար:

Եղեմ յաւերժացաւ, իր աննման հարս-  
նիքով, բնութեան ընձեռած անսահման  
պարգեւներով եւ մեծ անկումով, Գեթսեմա-  
նին յաւերժացաւ արիւն քրտինքով, Յու-  
զայի համբոյրով, Յիսուսի վերջին ազօթքով:

Եղեմ բնութեան չքնաղ կոյսն էր, հոն  
ոչխարը իր գառնուկը, գայլը իր կորիւնը  
թողուցած կը թափառէին անվախ. Գեթ-  
սեմանիին վրայ Աստուծոյ անէծքը թափ-  
ուած էր. հոն վրէժ կը լուծէր մարդկութե-  
նէն, հոն անմեղը կը գողար, կը սոսկար  
մահուան առաջնորդող պաղ քրտինքի մէջ  
որողուած:

Եղեմի ջինջ երկինքը, տակաւ առ տակաւ

ձած կեցին՝ շանթածիբ ամպերը, գեղեցիկ առաւօտին յաջորդեց հեղձուցիչ վրիժառու երկինք մը, Գեթսեմանիի տոնյն ու մառախլապատ երկինքին, ահարկու երեւոյթներուն, մահուան առեւտրէն պատկերացումին, Գողթայի քստմենցուցիչ դէպքերուն, որոնք շարունակութիւնն են Գեթսեմանիի տեսարաններուն, յաջորդեց առօտ մը գեղեցիկ, արշալոյս մը սքանչելի, յաղթանակ մը անման:

Եղեմ խորհրդանշանն է, Աղամին հպարտ բարձրացումին, անխոհեմ վարմունքին, մեծ անկուծին, Գեթսեմանին խորհրդանշանն է երկրորդ Աղամին կամաւոր խոնարհութեան, անձնագոհութեան, աննման բարձրացման: Առաջին Աղամը անէծքով ու մեղքով պղծեց Եղեմի անբռնութիւնը, նուիրական գետինը եւ մեղքին անտեսանելի միջրոպները ցանցընեց ամէն կողմ. երկրորդը իր արցունքով եւ արիւն քրտինքով Գեթսեմանին ցողեց. վերջին հառաչանքով ակօսեց Գեթսեմանիի ստուերոտ լոռութիւնը եւ այդ գետինն վրայ ահաւոր Աստուծոյ շորանը կանգնեց:

Եղեմ բարոյական մահը ծնաւ, Գեթսեմանին նոյն մահէն կեանքը կորզեց, Եղեմ անջինջ տառերով մարդուն մեղսասիրութիւնը քանդակեց, Գեթսեմանին Աստուծոյ անսահման զօրութեան, անաչտո արդարութեան, աննման սիրոյն ապացոյցը տուաւ:

**Մ Ո Վ Մ Է Ս Յ. Մ Ո Ի Ր Վ Տ Ե Ա Ն**

**Ա. Մ Ո Ի Ս Ն Ո Ի Թ Ի Ի Ն**

Երկուշաբթի օր, Սկիւտար, Տէր եւ Տիկին Գրիգոր Շահպազի բնակարանին մէջ, տեղի ունեցաւ իրենց աղջկան Օր. Երանուհի Շահպազի ամուսնութիւնը՝ Արշակ էֆ. Տաղլեանի հետ, ներկայութեամբ բազմաթիւ հանդիսականներու եւ ծանօթ անձնաւորութիւններու: Հարսը եւ փեսան՝ հաւասարապէս օժտուած խնամուած դաստիարակութեամբ մը եւ զօդուած գաղափարային նոյնութեամբ՝ կը խոստանան երջանիկ միութիւն մը կազմել:

Մեր շնորհաւորութիւնը կը յայտնենք՝ Տէր եւ Տիկին Գրիգոր Շահպազի, Տաղլեան ընտանիքին, և նորապսակ ամուսին՝ այս ուրախառիթ ամուսնութեան առթիւ:

**ՀՈՉԱԿՈՒՈՐ ԳՐԱԳԷՏՆԵՐ**  
**ԵՒ ՄՍՏԵՆԱԳԻՐՆԵՐ**  
**ԻՐԵՆՑ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ**

Եպիսկոպոս Պրթլըր՝ իր նմանութիւն երկին համար շարունակ քսան տարի աշխատեցաւ, սալայն տակաւին այնքան զգոհ էր անկէ որ՝ ուզեց զայն այրել, ոչնչացնել:

Ժ. Ժ. Ռուսօ կ'ըսէ. «Ոճիս շնորհն ու գեղեցկութիւնը շատ աշխատութիւնով եւ անվերջ սրբագրութիւններով ստացայ»:

Վիրգիլիոս իր Եղիսականին համար տանուէկ տարի աշխատեցաւ:

Հովհորնի եւ Էմբրոսընի նման հռչակաւոր գրագէտներու այն հաւաքածոները՝ որոնք քիչ ժամանակի մէջ կրնան կարդացուիլ՝ շատ տարիներու յամառ աշխատութեան արդիւնքներ են:

Մոնդէսքիէօ իր Լուիի Ոգին երկին՝ զոր մէկը կրնայ մէկ ժամուան մէջ կարդալ, քսանեւհինգ տարիներ աշխատեցաւ:

Էտէմ Սմիթն իր Ազգերու հարսուքիւնը գործին տասը տարի վատնեց:

Անգամ մը մրցակից կատակաբան մը երեք տողի համար երեք օր վատնելուն համար Եւրիփիտէսը հեզնելով ըսաւ. «Ես այնքան ժամանակի մէջ հինգ հարիւր տող գրեցի»: Եւրիփիտէս այս հեզնութեան սպէս պատասխանեց. «Սակայն քու այդ 500 տողդ երեք օրուան մէջ սոռացման անդունդին մէջը պիտի թաղուի. մինչ իմ երեք տողս յաւիտեան պիտի ապրի»:

Արիոսթօ իր Փոքրկի մը նկարագրութիւնը երկը տասնեւվեց տարբեր կերպերով գրեց, Եւ իր Orlando Furiosoին տասը տարի աշխատեցաւ: Էտէմ Սմիթն իր Բնութեան Լոյսը գործին 18 տարի վատնեց:

Մեծ կենդանաբան մը իր Ճաննին Անդամագնութիւնը երկին 18 տարի աշխատեցաւ:

Թհօրօ իր օրագրին մէջ սապէս գրեց .  
 «Գրադարանիս մէջ 900 հատոր գիրք ունիմ  
 որոնց 700 հատորը ես գրած եմ . սակայն  
 տակաւին երբ գրիչը ձեռք կ'առնեմ նոր ու-  
 բոյժան, նոր գօրութեան եւ նոր եռանդի  
 պէտքը կ'զգամ» : Այս զէպքերը պերճախօս  
 ապացոյց են ցուցնելու թէ մեծ գրագէտ-  
 ներ իրենց հանճարը փայլեցնելու համար  
 որքան ջանք եւ ճիգ թափած են : Գրեթէ  
 միշտ այսպէս եղած է բոլոր մեծ գրողներու  
 եւ մեծ գործողներու համար :

Հնչակաւոր ծեփե .— Միլտոն իր Կորուս-  
 եալ Դեախս տիեզերահռչակ երկ , կոյր եւ  
 ծեր վիճակի մը մէջ հեղինակեց :

Տանտօլօ 94 տարեկան՝ մեծամեծ յաղ-  
 թութիւններ շահեցաւ :

Պագոն եւ Հիւմպոլթ մինչեւ իրենց վեր-  
 ջին օրերը եռանդուն ուսանողներ էին :

Տօքթ. Ճօնսըն իր Բանասեղծներու կեան-  
 քն անուն երկը 78 տարեկան եղած ատեն  
 գրեց :

Տիֆօ 58 տարեկան էր երբ Բոպեցոնց  
 Քրիզօքն հրատարակեց :

Պլատոն 80 տարեկանին գրիչը ձեռքը  
 հոգին աւանդեց :

Թովմաս Սքօթ 86 տարեկան Երրայեցե-  
 րէն սորվիլ սկսաւ :

Երբ Կալիլէոս շարժման օրէնքներուն  
 վրայ գրել սկսաւ , զրեթէ 70 տարեկան  
 էր :

Ճէյմս Ուաթ 85 տարեկան գերմաներէն  
 սորվեցաւ :

Տիկին Սօմրուիլ իր Մասնիկներու Ման-  
 բաղիսային Գիտութիւնք երգը 89 տարեկանին  
 աւարտեց :

Հիւմպոլթ իր Քոզմոսը մահուանէն ամիս  
 մը առաջ , այսինքն 90 տարեկան աւարտեց :

Զօր. Կրէնդ 40, 42 տարեկան բոլորովին  
 անձանօթ մէկն էր , անկէ ետքը պատմու-  
 թեան էն երեւելի զօրապետներէն մէկը  
 եղաւ :

Հորտ Փալմըսթըն մինչեւ վերջը «ծեր  
 տղայ» մըն էր, ինչպէս կ'անուանէին զին-  
 քը : 75 տարեկան երկրորդ անգամ ըլլալով  
 Անգլիոյ նախարարապետ անուանուեցաւ , եւ  
 81 տարեկան մեռաւ , նախարարապետու-  
 թեան աթոռին վրայ :

Կալիլէոս 77 տարեկան կոյր եւ ծեր վի-  
 ճակի մէջ ճօճանակի սկզբունքները իրա-  
 գործելու կը ջանար ամէն օր :

Հօնկֆէլօի, Հուլիթիբրի եւ Թէնիսընի  
 նման հռչակաւոր բանաստեղծներ իրենց էն  
 ընտիր եւ էն յարդի երկերէն ոմանք իրենց  
 70րդ տարիքէն վերջը գրած են :

Տրայտըն 73րդ տարիքէն վերջը Ենեա-  
 կանի թարգմանութեան սկսաւ :

Բօպէրթօլ՝ Տանդէն իր իսկ լեզուովը  
 կարդալ հասկնալու համար 60րդ տարիքէն  
 վերջը իտալերէն սորվեցաւ :

Ն. Ուէպսթըր 50րդ տարիքէն վերջը 17  
 լեզուներ սորվեցաւ :

Լիւտովիկօ 115 տարիքէն ետքը իր ժա-  
 մանակին Յիւստակարանը գրեց :

Կրկերոն կ'ըսէ . «Մարդիկ գինիի պէս  
 են , տարիքը յոռիները կը թթուեցնէ , եւ  
 ընտիրները աւելի կ'ազնուացնէ :

ԱՐԱՄ Մ . ԹՈՐՈՍԵԱՆ

---

Ուսուցչաց Օգնութեան Սնտուկին տե-  
 ւական նպաստ մը կապուեցաւ Քաղաքական  
 Ժողովի վերջին նիստին մէջ : Նոյն սնտուկին  
 Հոգաբարձութեան կողմէ առաջարկուած էր  
 որ մինչեւ 300 զրուչ ամսական ունեցող ու-  
 սուցիչներուն թոշակէն 100 զրուչին 20 փա-  
 ըս եւ 300 զրուչէ վեր ամսական ունեցող  
 ուսուցիչներուն թոշակէն 100 զրուչին մէկ  
 զրուչ ամէն ամիս վար զրուին իրեննպաստ  
 Ուսուցչաց Օգնութեան Սնտուկին : Ուսում-  
 նական Խորհուրդն ալ համամիտ էր : Քա .  
 ղաքական Ժողովը բարեփոխելով այս մը-  
 տածուած օրոշեց որ ամէն թաղի ուսուցիչ-  
 ներուն ամսէ ամիս տալիք գումարին չափ  
 ալ թաղական սնտուկը նպաստէ յիշեալ սըն-  
 տուկին :

### ՏԻՐԱՆ ՊԷՅ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՌՈՒՄԱՆԱՆԱՆ ԱՐԲՈՒՆԻՐՈՆ ՄԷՋ

Տաղանդաւոր Հայ թաւջութակահար Տիրան Պէյ Ալեքսանեան, որուն մայրաքաղաքիս մէջ ու Բարիզ ունեցած երաժշտական յաջողութիւնները տակաւին թարմ են միտքերու մէջ, այս միջոցիս Ռումանիա կը գտնուի, ուր պիտի տայ նուագահանդէսներ :

Ռումանական թերթերը լեցուն են մանրամասնութիւններով՝ իր Պուքրէշի մէջ գրտած ճշմարտապէս մեծ ընդունելութիւններուն մասին : Պուքրէշի պատկերազարդ թերթերը հրատարակած են իր սլատիկերը, ղըրուատական տողերով : Տաղանդաւոր արուեստագէտը Պուքրէշ ժամանած օրէն ի վեր պատեհութիւն ունեցած չէ իր իջեւանած հիւրանոցը մնալու : Ամէն գիշեր կամ ցորեկ, կարգաւ կը հրաւիրուի Պուքրէշի բարձր դասու ընտանիքներէն, ուր կը հիացնէ ամէնքն ալ :

Իր մասնաւոր նուագահանդէսը սարքելէ առաջ, որ այս կիրակի օր տեղի պիտի ունենայ, շրջապատուած է արդէն համակիրներու եւ հիացողներու ստուար խումբէ մը, որոնց մէջ կը գտնուին պետական բարձր պաշտօնատարներ, ազնուականներ եւ երկելիներ : Ռումանիոյ էլիզապէթ թագուհին՝ Քառմեկ Սիլվա գրագիտուհին, որ մեծ գրահատող մըն է ամէն տեսակ արուեստներու եւ տաղանդաւոր արուեստագէտներու, և որ առաջին կարգի ձեռնհասութիւն ունի գրական, երաժշտական եւ նկարչական գործերու մէջ, կանուխէն լսած ըլլալով Տիրան Պէյի համբաւը, անոր Պուքրէշ ժամանելէն մէկ քանի օր ետքը, մասնաւոր հրաւերով մը արքայական պալատը հրաւիրած է զայն եւ բարեհաճած է երկուք ու կէս ժամուան ունկնդրութիւն մը ընդհեղ Հայ արուեստագէտին : Տիրան Պէյ, թագուհիին փափաքովը, նախ նուագած է Ն. Վեհափառութեան

ամէնէն աւելի խորթած կտորներէն երգ մը ծանր ու բարդ, որուն ըստ օրինի պէտք էր անմիջապէս յաջորդէր զուարթ եւ արագ ալեկրօն : Ալեքսանեան սակայն երգէն ետքը փոխանակ ալեկրօն մտնելու անմիջապէս, կը սկսի ճպոտի խաղեր ընել : Ն. Վեհափառութիւնը որ այնչափ հիացումով ունկնդրած էր արուեստագէտը, պահ մը թեթեւ վարանումի մը կ'ենթարկուի, այս շեղումը տեսնելով : Ալեքսանեան կը կռահէ եւ առանց ընդհատելու եղանակը, զլսու յարգական շարժումով մը ներողութիւն կը խնդրէ եւ ահա կը սկսի ալեկրօն, ուր Հայ արուեստագէտը գերազանցապէս ի վեր կը հանէ իր մատներուն ճարտարութիւնը եւ արուեստը արտայայտելու բնածին կարողութիւնը : Թագուհին, հիացած, կրկին կրկին կը շնորհաւորէ երիտասարդ թաւջութակահարը, որ նուագը աւարտելէն ետքը կը փութայ Ն. Վեհափառութեան բացատրութիւն տալ իր շեղումին մասին թէ, իր վարպետը կ'ըսէր մահէր աւելի խորթալուր սեպած է փոխանակ ծանրէն անմիջապէս թեթեւի անցնելու, աստիճանական անցք մը ընել : Վեհ. թագուհին կը գնահատէ այս նորութիւնը և կը հաճի խնդրել Տիրան Պէյէ որ նոյն իրկուներ պալատական օրէկսքօն ինքն ալ մաշակցի : Այս օրէկսքօն կը բաղկանայ երկու ջութակէ, մէկ թանձրաջութակէ եւ մէկ թաւջութակէ : Ալեքսանեան պատիւը կ'ունենայ այդ օրը թաւջութակին տեղը գրաւել եւ Ն. Վեհափառութեան կրկնակի գնահատումներուն եւ գոհունակութեան արժանանալ :

Էնեքրանցանս Ռումեկն հետեւեալ գնահատականը կ'ընէ Տիրան Պէյի.—

«Մայիս 9/22 երկուշաբթի օրը, տեղի պիտի ունենայ թաւջութակահար Պ. Տիրան Ալեքսանեանի նուագահանդէսը, Պ. Միշէ Ս. Մանօի աջակցութեամբ :

«Պ. Տիրան Ալեքսանեան՝ ծնած Կ. Պոլիս :

Ե Ր Գ Ի Զ Խ Մ Բ Ա Կ Ը

1881ին, կանխահաս եւ սակայն նշաճաւոր արուեստագէտ, հրաշալի մանուկ մը չէ, անոնց նման որոնք, ատենէ մը ի վեր կ'ե-  
րեւան մեր նուագահանդէսի սրահներուն մէջ:

«Երաժշտութեան մեծ ընդունակութիւն ցունելով, Ալեքսանեան, տասը տարեկանէն սկսաւ թաւջութակի իր դասերը: Յետոյ, իր հայրենի երկրին մէջ ալ ոչինչ ունենալով սորվելիք, տասնըհինգ տարեկան հասակին մեկնեցաւ Տրէզտ, ուր հինգ տարի աշխատեցաւ, անուանի բրոֆէսէօր կրոցմաէրի քով, որուն ամէնէն փայլուն աշակերտներէն մէկն է:

«Ալեքսանեան, արդիւնաբեր պտոյտներ ընելէ ետքը Գերմանիա եւ Աւստրիա, հաստատուեցաւ Բարիզ ուր նախանձելի համբաւ մը չիւնեց: Լամուրէօի հետ պայմանագրուած է եւ քիչ ատենէն պիտի սկսի Գօնսէրվաթուաօի նուագահանդէսներուն, որոնք արուեստագէտի մը արժանիքը երեւան կը բերեն:

«Ալեքսանեան մաս կը կազմէ Արման Փօրէսթի Բուլթօսին, որուն հետ է որ կ'ընէ իր պտոյտները»:

«Առաջին անգամ է որ Ալեքսանեան Պուքրէշ կուգայ, և տարակոյս չկայ թէ հոս գտնելիք յաջողութիւնները պատճառ պիտի ըլլան իրեն կրկին հոս գալու:

«Ալեքսանեան գաղափարապաշտ թարգման մը և խղճամիտ վարպետ մը ըլլալով հանդերձ, առաջնակարգ բնածին արուեստագէտ մըն է, օժտուած ամուր դաստիարակութիւնով մը եւ մտաւորական բարձրագոյն մշակումով, որոնցմով կրնայ թափանցել մեծ վարպետներուն բոլոր նրբութիւններուն եւ արտայայտել դանոնք»:

Ժամանակէ մը ի վեր գեղեցիկ նորութիւն մը կը տեսնուի Պարբերդի վարի եւ վերի թաղերու Աւետարանական եկեղեցիներուն մէջ, այն է երգիչ երկսեռ խմբակի մը կազմակերպութիւնը, զոր հաստատած է Պ. Մարտիրոս Պուճիգանեան: Այս երաժշտագէտ ուսուցիչը մեծ բաղձանք կ'զգար վարի թաղի եկեղեցական երգեցողութեան նոր հրապոյր մը տալու: Իր այս փափաքը իրականացնելու համար երգիչ ուսանողուհիները կը վարժեցնէր իրենց զպրօցին մէջ, լուր օրուան մասնաւոր ժամերուն, իսկ տըղաքն ալ կիրակի առտունները աղօթաժողովէն ետքը, ժողովարանին մէջ դաշնակին քով, Յետոյ կէս օրին, կիրակնօրեայ դասէն վերջը աղջիկ ու տղայ միասին դաշնակին քով կը խմբէր եւ կ'առաջնորդէր անոնց՝ երգելու ներդաշնակօրէն եւ երկձայն կամ եռաձայն եղանակով: Այսպէս իրիկուան քարոզի ատեն, ժողովուրդը առիթ կ'ունենար համով եղանակներ լսելու: Միւթ սրական է տեսնել թէ իր բացակայութիւնը չզրկեց մեզ հոգեկան այդ սիրուն վայելքէն: Իր պղտիկ եղբայրը իրեն յաջորդեց արժանաւոր կերպով ու շարունակեց իր գործը գնահատելի յաջողութեամբ:

Մէկ երկու ամիսէ ի վեր, գօլէճին երաժշտապետ ուսուցիչը, Պ. Սամուէլ Պաշատուրեան ալ՝ այս տեսակ ձեռնարկ մը սկըսած է յառաջ տանիլ վերի թաղի Աւետարանական եկեղեցիին մէջ: Գօլէճի երկսեռ ուսանողներէն ընտիր խումբ մը կազմած է եւ յարմար ժամանակներու մէջ զայն կը վարժեցնէ որ կիրակնօրեայ քարոզի ատեն որդուած հասուածներ երգեն վայելչօրէն եւ քառաձայն եղանակով: Այս նոր անօրինութեամբ ժողովուրդը թէեւ կը զրկուի երգելու հաճօքէն, սակայն ատոր փոխարէն ներդաշնակ երգեր ունկնդրելու վայելքը կ'ունենայ եւ իր մէջ կը մշակուի սրբազան երաժշտութեան աւելի ազնուացած ճաշակ մը:

ՍԵՆՐԱԿ ԶՈՒՂՈՒՄԵԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Շքալեկն անգլ. շոգենաւին պէս, ճարտանակոն Շուլոցու անուն առեւտրական շոգենաւ մը ծփուն տկանի մը բաղխեցաւ Միսոցո կղզիներուն մօտ, Բօրթ-Արթիւրի շրջակայքը: Շոգենաւը թէեւ չընկղմեցաւ, բայց ծանրապէս իջասուեցաւ:

\* Մովակալ Ռոժտեսդվենսքի ցարդ կը գտնուի Փրանսական ծովեզերքներուն մօտ տեղ մը: Ռուս թորփիլանաւերը զէպի հիւսիս երթալով, հետազօտութիւններ կը կատարեն: Ռուսերու նպատակն է յարժար վայրկեանին հասնիլ Վլատիվոսդօքսիոս նաւատորմը պիտի կուռի ճարտական նաւատորմին հետ, երբ յարձակում կրէ անոր կողմէ: Թայմզի Չինուորական Քննադատը կ'ըսէ որ եթէ Ռոժտեսդվենսքի միտք ունի կուռելու կամ Վլատիվոսդօք երթալու, բուն ժամանակն հիմա է, քանի որ լրուսն լուսնի է, եւ գիշերները յարձակումէ չվախնար, իսկ եթէ նորէն տնտնայ, ամիս մը ետքը չկրնար գտնել նոյնքան պատեհ առիթ մը:

\* Բեզերսպուրկի եւ Քրոնշտատի մէջ զրոյց կը չըլի թէ ծովակալ Ռոժտեսդվենսքի ջղային ծանր հիւանդութենէ մը տառապելուն համար խնդրել է որ ետ կանչուի:

\* Ճարոնի մէջ մեծ գոհունահոլութիւն պատճառած է այն լուրը թէ ծովակալ Ռոժտեսդվենսքի հիւանդ ըլլալով ետ պիտի կանչուի:

\* Ո եւ է լուր չկայ թէ ո՛ւր կը գտնուի Մովակալ Թօկօ: Ճարոնցի ծովակալին հրամանին տակ գտնուող մարտանաւերու մարդոց ծնողքները երկար ատենէ ի վեր ո եւ է նամակ չեն ստացած իրենց զաւակներէն, որովհետեւ խաթիւ արգիլուած է թղթակցութիւն ընել: Ճարոնցիները բռնեցին անգլիական Լիմբրիսկն շոգենաւը Քօրէայի հարաւակողմը, եւ Փրանսական Քուանչիկամ շոգենաւը Բէսքատորեան կղզիներուն մօտ:

\* Ամէն նշան կը ցուցնէ թէ մօտ օրէն ծանր կռիւներ պիտի սկսին ծովի եւ ցամա-

քի վրայ: Մառէշալ Օյամա իր պահանջած օգնական զօրքերը ամբողջապէս ստացած ըլլալով, ուժգին յարձակողականի մը պիտի սկսի: Մովակալ Թոկօ ալ անմիջապէս պիտի յարձակի երբ ծովակալ Ռոժտեսդվենսքի հասնի ա՛յն տեղը զոր ինք որոշած է կանխապէս:


Շահին նամբորդութիւնը. — Պարսկաստանի Շահը Վիեննա պիտի այցելէ Ֆրանց Եոզէֆ կայսեր մասնաւոր հրահերով: Շահը չորս օր պիտի մնայ Աւստրիոյ մայրաքաղաքին մէջ եւ անկէ Բարիզ եւ Քոնթրէքսէվիլ պիտի երթայ: Հաւատեղեակ չըմանալներու մէջ կը հաւատեն թէ Շահին այցելութեան միջոցին առեւտրական բանակցութիւններ պիտի կատարուին Պարսկաստանի հետ, Աւստրիոյ Հունգարիոյ եւ Գերմանիոյ օգտին համար:

Մարոքի խնդիրը. — Մարոքի արտաքին գործերու վարչութիւնը մերժեց Ֆրանսայի բոլոր առաջարկները, զանոնք հակառակ նրկատելով միջազգային պայմանագրութիւններու տրամագրութիւններուն: Սակայն էմիրը հաւանեցաւ սահմանագրութիւններուն պաշտպանութեան համար զինուորական կայաններ հաստատել, ամէնը 2000 Մարոքցի զինուորներով, Ֆրանսացի մարզիչներու հրամանատարութեան տակ:

Կոմս Թաթէնպախ, գերմանական դեսպանը, որ հիմա Մաս կը գտնուի, Վիլհէլմ կայսեր կողմէ Մարոքի էմիրին յանձնեց «Կարմիր Արծիւ» պատուանշանը: Այս առթիւ դեսպանը ըսաւ էմիրին թէ Վիլհէլմի կը փտփաքի հանգիսաւոր դաշնագիր մը կընքել Մարոքի հետ: Կոմս Թաթէնպախ աւելցուց նաև թէ ինք վստահ է որ ո՛չ մէկը պիտի դաշի Մարոքի ներքին գործերուն եւ անոր վարչութիւնը անկախ պիտի մնայ միշտ:

Տեր եւ ՏՅօրեհ  
Հ. ՍՏԵՓԱՆ Խ. ԻՌԹԻՒՃԵԱՆ

Տպագ. նժան Կ. ՊԵՊԵՐԵԱՆ  
Պապը Ալի Տասսէսի Իգսամ լրագրին դիմ քի 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մե-  
քայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ  
մը ունենալ, որ վիետե լաւ մեքենայ մը անթիւ  
եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչ-  
դեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց  
եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

## Ս Ի Ն Կ Է Ր Ի

Չեռփի, ոսփի եւ ձեռփի ու ոսփի  
միակգամայն սեփեցաներ  
կը գտնուին

մեքենան յաւագոյնն է. այս մեքենան ամենէն ա-  
ւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւ-  
րագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ-  
ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառ-  
տուներուն մէջ՝

ՉԱԲՈՒՄԱՆ  
ՄԱՍՆՈՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ, Մեծֆիողոց, ԿալաթաՆՍէրայի Լիսէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.

2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դիմաց.

ՊՈԼԻՍ 1. Սուլթան համամ.

2. Սուլթան Պայազիտ.

(35—50)

Դասերը եւ նորոգութիւնները ձրի.

Կասաբեալ երաբխաւորութիւն

Մասնահիղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ

Ակուայի հիւանդութեան որ եւ է տեսակը՝ ցաւ մըն է՝ որուն դիմադրել անհնար է, և որ մարդուս կեանք եր դառնացնէ: Ու անոր դարմանումին տեսակներն ալ՝ կը վերաբերին արուեստի մը՝ ամէնէն փափուկներէն է արուեստներուն: Ո եւ է ատամնա-ստի՝ . . . թէ Բայց ամէն ատամնաբոյժ չի կրնար զոհաջուցիչ կերպով կատարել ակուայի դարմանում: Պէտք է ուրեմն դիմել ատամնաբոյժի մը՝ որ վստահութիւն ներշնչած ըլլայ ամէն կերպով:

**Ա Ր Ա Մ Գ Ա Ր Ա Գ Ա Շ**

**Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ**

հաստատուած կարողութիւն մը ձեռք բերած է այս մասին:

Կատարեալ դարմանում ամէն տեսակ ակուաներու: Մասնաւոր յաջողութիւն արեւտական ակուաներու զետեղման, բնականին անթերի զեղեցկութեամբը: Տարիներէ ի վեր ձեռք բերած իր յաջողութիւնը եւ յաճախորդներու կողմէ գտած ընդունելութիւնը՝ լաւագոյն երաշխաւորութիւններն են՝ որ ակուայի կողմէ ո եւ է նեղուող՝ դիմէ Արամ Գարաշի՝ վստահ թէ՛ յուսացածէն աւելի գոհ պիտի մնայ:

Կը գտնուի ամէն առտու կանուխ Սկիւտար Իճատիէ իր բնակարանը. եւ ամէն օր-4էն մինչեւ 11՝/2, Պօլիս Պահճէ Գարու, Պին-Պիր Չէշիտի դիմացը: Եւ կիրակի օրեր՝ ժամադրութեամբ:

**Թ Է յ մ ի գ ն է Բ**

**ԱՌԱՆՑ ԱՆԳՆՄ ՄԸ ԱՅՑԵԼԵԼՈՒ**



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Կ. Պօլիս, Ճէլալ Պէյ խանի սակ. քիւ 10

Ո Ի Բ Պ Ի Տ Ի Գ Տ Ն Ե Բ

Կօրով եւ զարգացումն տուիտով

եւ անհամեմատ աման գինով

ԱՄԵՆԱՃՈՆ ՄԹԵՐԲ ՄԸ

Հնգկաստանի, Ճավայի, Սէյլանի, Չինաստանի

Թ է Յ Ե Բ ՝ Ո Ի

Եւ մանաւանդ մասնաւորապէս ներածուած

**Ծարբերակիան թի**

ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՁ ՄԵՐ ՎԱՃԱՌԱՆԻՇԸ ՓՆՏՈՒԵՑԻԲ

Բոլոր ԹէՅ ծախսովներու քով